# Ազգ

Azg

12-18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2025 ՈՒՐԲԱԹ 031(5855)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Ողջ կառավարությունն է հալածում Հայ եկեղեցուն, Հայոց Հայրապետին

Հրապարակային այն հայտարարությունից հետո, որում վարչապետ Փաշինյանը կտրուկ մերժում էր իր տեսակետին հակասող տեսակետ ունենալու գործադիր մարմնի անդամների իրավունքը եւ այլ տեսակետ ունեցողներին խորհուրդ էր տալիս հրաժարական ներկայացնել՝ այլապես սպառնալով նրանց ազատել պաշտոնից, արդեն անցել է շուրջ մեկ շաբաթ, բայց ինքնակամ հրաժարականի ոչ մի փաստ չի արձանագրվել, իսկ վարչապետը ցարդ ոչ ոքի չի ազատել պաշտոնից, հետեւաբար հանգիստ կարելի է եզրակացնել, որ կառավարության կազմում բոլորն անխտիր նույն տեսակետին են Հայ Առաքելական եկեղեցու եւ Ամենայն Հայոց հայրապետի դեմ հալածանքը շարունակելու գործում:

Արձանագրենք փաստը, որպեսզի հետագայում չլինեն կեղծ մեղադրանքներ:

ՀՈԼՈՔՈՍՏ

## Նոր Բուխենվալդ ու Դախաու... Պաղեստինում

«Ալ-Ջազիրա» հեռուստագործակալության կայքէջում օրերս տեսա Պաղեստինի Խան Յունես ու Ռաֆահ բնակավայրերի արբանյակային լուսանկարները, որոնցում երեւում են շենքերի ավերակներից մաքրված հսկա տարածքներ, որտեղ, ըստ ՄԱԿ-ի դիտորդ խմբի պատասխանատու պաշտոնյայի՝ Իսրայելի կառավարությունը պատրաստվում է համակենտրոնացման կայաններ կառուցել, որոնցում բռնատեղավորելու է Գազայի բնակչությանը, որը 2023 թ.ի մայիսի 6-ի «Համասի» զինյալ «կույր» ընդվզումից հետո, արդեն շուրջ երեքուկես տարի, ենթարկվում է Ցահալի ցամաքային, օդային ու ծովային ռմբակոծություններին, շրջափակման ու սովամահության:

Երկու միլիոն պաղեստինցիներ: Ո՞նց են նրանք խցկվեցվելու համակենտրոնացման կայաններում, ինչպիսիք էին 80 տարի առաջ Գերմանիայում, Լեհաստանում եւ այլուր ֆաշիստների կառուցած Բուխենվալդի, Դախաուի, Աուշվիցի միլիոնավոր հրեաների, նաեւ սլավոնների համար կառուցված չարչարակայանները, որոնց «արժանանալու բախտն» անգամ, դրանից 30 տարի առաջ, չունեցան Չան ղըրը ու Դեր Զոր քշված մեր միլիոնավոր ազգակիցները, որոնց համակենտրոնացման կայան ու ճամբար դարձան արաբական անապատները միայն:

Արդ, նույն իսրայելցիք ինչպե՞ս են Գազայի 2 միլիոն պաղեստինցիներին խցկելու այդ նորակառույցների մեջ: Շատ պարզ, հիտլերական ձեւով: Նրանք խցկվելու են այնպես, ինչպես ժամանակին ֆաշիստներն էին նման կայաններում մահվան ցնցուղների տակ հալեցնում-ոչնչացնում է հրեաներին, որպեսզի տեղ բացվեն հերթի սպասող հազարավոր մահապարտների համար: Մինչդեռ այժմ ռումբերով ու հրթիռներով են ոչնչացնում նրանց հենց տեղում, առավել՝ սովամահության ենթարկում մարդկանց, հենց այնպես՝ ինչպես իրենց դաշնակից ազերիներն արեցին 1923-ին Արցախում, ու Never again գոռացող հրեա լոբբիստները, ինչպես, ամոթով եմ ասում, մեր պետականները, ոչինչ չարեցին բացի ցուցադրական մեկ-երկու քայլից, բնիկ արցախահայությանը փրկելու համար:

Պաղեստինում գործող ՄԱԿ-ի զեկուցաբերների վկայությամբ, Գազայում արգելափակված բնակչության ամենախոցելի խավը երեխաներն են, որոնք ուղիղ նշանառությամբ փառապա՞նծ Ցահալի կողմից սպանվում են այն վայրերում, որտեղ նախապես գործում էին մարդասիրական կազմակերպությունների սննդի օգնության գրասենյակները: Սովալլուկ երեխաներ, ինչպես մեր հայրերն ու մայրերը, որոնք արաբական նույն անապատներում ձիերի թրիքի միջից գարու հատիկներ էին գտնում եւ ուտում...

➩5

## Նոր տիպի կառավարողներ են պետք

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Նեպալում տեղի ունեցող դաժանությունները հաջորդել են սոցցանցեր փակելու կառավարության որոշմանը: Սոցցանցերը հիմա դարձել են հանրության կառավարման գործիք ողջ աշխարհում, այդ թվում՝ տարբեր երկրներում դրսից արտաքին կառավարում կարող են ապահովել: Այլեւս պետք չէ մեծ ռեսուրսներ ծախսել եւ ամենուր ներդնել սեփական մարդկանց եւ գործակալներ, երբ նույն բանն անգամ տասնապատիկ էֆեկտով կարելի է սոցցանցով անել: Նայեցի Նեպալում տեղի ունեցող դաժանությունների մի քանի տեսանյութ: Նկատեցի, որ դրանց մեծ մասը պատահական տեսանյութեր չեն, այլ հավանաբար հատուկ ծառայությունների արած կադրեր՝ նախօրոք դիրքավորված, հատկապես դաժանությունների պահերը ֆիքսած, որոնք չեն կարող չազդել մարդկանց ենթագիտակցության վրա, չարթնացնել վատ բնազդները եւ կատարվողը վիրուսային, կրկնօրինակվող չդարձնել: Այսինքն ասել, որ Նեպալում կատարվողը ժողովրդական պոռթկում է, առանց արտաքին հրահրումների, նեպալցիներն ինքնաբախվել են՝ մեծ սխալ կլինի: Սոցցանցերը դարձել են սարսափելի զենք, որ գործածում են՝ ով չի ալարում, եւ հատկապես՝ աշխարհի տարբեր երկրների հատուկ ծառայությունները այլ երկրներում խժդժություններ հրահրելիս, նայած իրենց հետապնդած նպատակի:

Աշխարհն հիմա հիմնովին փոխվել է նույնիսկ տասը տարի առաջվա համեմատ, կարելի է պատերազմել եւ հաղթել՝ առանց երկրի տարածքում ֆիզիկապես հայտնվելու, անօդաչուներով եւ այլ հեռահար միջոցներով կետային հարվածներ հասցնելով, երեսից ժպտալով եւ դաշնակից ձեւանալով՝ հետեւից խոցել, ինչպես Քաթարում եղավ, սոցցանցերով այսուայն երկրում իրավիճակ ապակայունացնել եւ իշխանություն փոխել:

Ու այս անճանաչելի փոխված աշխարհում լրիվ նոր, դաժան, ոչ մի բանի առաջ կանգ չառնող կանոններ են գործում հիմա: Այստեղ ոչ ոք ոչ դաշնակիցների վրա կարող է վստահ լինել, ոչ ինչ-որ ստորագրված կամ նախաստորագրված թղթերի՝ ԱՄՆ-ի նման դաշնակից ունեցող եւ տնտեսական մեծ ներուժի տեր Քաթարին ԱՄՆ-ի մյուս դաշնակից Իսրայելի հարվածելը ձեզ ապացույց, Նեպալի՝ սոցցանցային արգելանքի դեմ հրահրված սոդոմ-գոմորը վկա:

➩3

## Խաչատուր Մխիթարյան. «Նախքան փախստական ճանաչվելը պիտի հաստատվի, թե արցախցիները չունեն որեւէ երկրի քաղաքացիություն»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

*«Ազգի» նախորդ՝ սեպտեմբերի 5-ի համարում գրել էինք, որ սեպտեմբերի 1-ին Գերմանիայի Հյուսիս Հռենոս Վեստֆալիայի Գելզենքիրհենի դատարանը, փաստաբանի հրատապ միջնորդությունն ընդունելով, առժամյա կանխել է Գերմանիայի Ներգաղթի եւ փախստականների գերատեսչության (BAMF)՝ ԼՂ-ից բռնագաղթած՝ Գերմանիայում ապաստանի հայցը մերժած հայուհու Ադրբեջան հարկադրյալ արտաքսումը:*

*Վերոհիշյալ գործով փաստաբանի՝* ***Խաչատուր (Քրիստիան) Մխիթարյանի*** *հետ առաջին անգամ ենք զրուցում «****Ազգ****ում»: Գերմանահայ իրավաբանների միության վարչության անդամ Մխիթարյանի հետ մեր ծավալուն զրույցը հայերեն էր: Թեեւ երիտասարդ փաստաբանի մասնագիտական եւ աշխատանքային լեզուն գերմաներեն է, բայց չնկատել չենք կարող, որ մեր զրույցի ընթացքում նա իր խոսքն օտար բառերով չաղավաղեց:*

**-Պարոն Մխիթարյան, 2024-ի սեպտեմբերի 16-ի որոշմամբ Գերմանիայի Կասել քաղաքի դատարանը պարտավորեցրել էր Ներգաղթի եւ փախստականների դաշնային գերատեսչությանը Արցախից (ԼՂ-ից) բռնի արտաքսված հայցվորներին փախստականի կարգավիճակ շնորհել՝ ԳԴՀ «Ապաստանի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն: Արդեն նախադեպը կա, ինչո՞ւ այն չի կիրառվում մնացած՝ Գերմանիայում ապաստան հայցող արցախցիների պարագայում: Ձեր հայցվորին՝ 58-ամյա կնոջը մերժել են փախստականի կարգավիճակ տրամադրել, եւ նրան, որքան էլ տարօրինակ է, կարող էին Ադրբեջան արտաքսել: Ձեր հրատապ միջնորդության շնորհիվ նա դեռ Գերմանիայում է:**

-Նախ եւ առաջ պետք է նշել, որ 2024 թ. սեպտեմբերի 16-ի Կասելի վարչական դատարանի երկու վճիռներն (խոսքը վերաբերում է նույն ընտանիքի անդամներին, պարզապես մայրն առանձին վարույթ ուներ, տղան եւ ընտանիքն՝ առանձին: Նույն դատական նիստի ժամանակ որոշումը կայացվեց, նույն օրը հրապարակվեց՝ ստացան փախստականի կարգավիճակ) արդեն եղել են մի շարք վարչական դատական գործընթացների առարկա, օրինակ՝ Վյուրցբուրգի եւ Գիսենի վարչական դատարաններում, ինչպես նաեւ ձեր կողմից մեջբերված Գելզենկիրհենի վարչական դատարանի վարույթում, եւ համապատասխանաբար գնահատվել են՝ թե՛ հայցվորի քաղաքացիության հարցի, թե՛ հայերի նկատմամբ խտրականության հարցի առումով: Դրա արդյունքում ես ավելի քան 10 վարչական գործերում՝ օգտագործելով նաեւ Կասելի վարչական դատարանի որոշումները, որոնք հիմնված էին Հայաստանի իրավական իրավիճակի վերաբերյալ իմ ներկայացրած տեղեկությունների վրա, հաջողության եմ հասել բոլոր հրատապ վարույթների շրջանակներում: Սակայն սա չի նշանակում, որ Ներգաղթի եւ փախստականների դաշնային գերատեսչությունը (ՆՓԴԳ, այսուհետ՝ գերատեսչությունը- **Ան.Հ.**) դրական իմաստով դասեր է քաղել այդ որոշումներից: Մինչ այդ, գերատեսչությունը ՀՀ-ն դիտարկել էր՝ որպես հայցադիմողների ծագման երկիր: Երբ տվյալ գործերում ներկայացրի հավաստագրեր ՀՀ քաղաքացիություն չունենալու մասին, դա հանգեցրեց գործերի վերջնական կամ ժամանակավոր հաջողության, քանի որ գերատեսչությունը մեծ մասամբ իրավասու չէր վերադարձը Հայաստան ստուգելու, այլ պարտավոր էր ուսումնասիրելու Ադրբեջան վերադարձի հնարավորությունը, քանի որ Արցախը (ԼՂ) 2023 թ. էթնիկ զտումից հետո փաստացի Ադրբեջանի վերահսկողության տակ է: Սա է պատճառը, որ ձեր նշած գործում գերատեսչությունը փորձեց ստուգել Ստեփանակերտից 58-ամյա հայցվորի վերադարձը Ադրբեջան: Հակառակ դեպքում գերատեսչությունը կրկին դատական գործընթացում պարտվելու էր: Սակայն փոխանակ ընդունելու, որ Ադրբեջանում առկա է խտրականություն, Ներգաղթի եւ փախստականների դաշնային գերատեսչությունը հայցվորին սպառնաց Ադրբեջան արտաքսմամբ՝ հղում անելով ադրբեջանական աղբյուրներին, որոնց համաձայն նա կարող էր ընդունել Ադրբեջանի քաղաքացիություն եւ խաղաղ ապրել այնտեղ:

➩3

# «Պարսից ծոց-Սեւ ծով միջանցքը՝ ապագային միտված մայրուղի»

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

Ճանապարհների ապաշրջափակմանը միտված վաշինգտոնյան պայմանավորվածությունների շուրջ իրանական կողմի հնչեցրած լավատեսական գնահատականների շարքը օրերս լրացրել է ՀՀ-ում Իրանի դեսպան **Մեհդի Սոբհանին**, պնդելով, որ «Հայաստանի տարածքով ոչ մի միջանցք չի լինելու եւ Վաշինգտոնում ստորագրված փաստաթղթում, ինչպես նաեւ Բաքվի եւ Երեւանի միջեւ խաղաղության համաձայնագրում «միջանցքի» մասին ոչ մի խոսք չկա»:

Իրանի ԱԳ նախին նախարար **Զարիֆը** նույնպես Թրամփի ճանապարհի մասին խոսելու նոր առիթ է ունեցել եւ սեպտեմբերի 9-ին Թեհրանում անցկացված մի ֆորումի ժամանակ, դարձյալ խոսել է «Թրամփի ճանապարհի» նոր հնարավորությունների մասին, հավելելով, որ Իրանի գերխնդիրների մի զգալի մասը պայմանավորված է անցյալում ձեւավորված կարծրատիպերով:

Նա հին մտածելակերպի լավագույն օրինակներից է համարել Ադրբեջանը Նախիջեւանի հետ կապող ճանապարհի մասին գոյություն ունեցող կարծրատիպը եւ հորդորել է հրաժարվել այդ «ժամկետանց» մտածելակերպից ու խորհուրդ տվել «թվացյալ» սպառնալիքը դարձնել հնարավորություն:

Այս հուսադրող մոտեցումների կողքին իրանում կան նաեւ «Զանգեզուրյան միջանցք»-ի առնչությամբ այլ տեսակետներ, որոնք այս կամ այն կերպ նախկինում «կարմիր գիծ» համարվող Մեղրիի սահմանային անցումակետի կորստով պայմանավորված մտահոգությունները փարատելու մասին են:

Վերջերս Իրանում շրջանառության մեջ է դրվել մի տեսակետ, համաձայն որի, «միջանցքն» ԱՄՆ-ին արտապատվիրակելու դեպքում, Իրանը թեեւ կորցնում է Հայաստանի հետ իր միջպետական սահմանը, սակայն Թեհրանը կարող է իր աշխարհաքաղաքական դիրքերն ամրապնդելու համար կյանքի կոչել Պարսից ծոց-Սեւ ծով միջացքի նոր երթուղին:

Ապագային միտված այդ նոր երթուղին նախատեսում է երկաթուղու գործարկմամբ Իրանի հարավային շրջաններից հասնել մինչեւ Ջուլֆա եւ, օգտվելով ապաշրջափակման մասին Վաշինգտոնում ձեռք բերված պայմանավորվածությունից, հատել Նախիջեւանից դեպի Հայաստան ձգվող ճանապարհն ու Վրաստանի տարածքով գնալ դեպի Սեւ ծով: Այս մայրուղու լիարժեք գործարկումով՝ Իրանը ցանկանում է ոչ միայն ամրապնդել իր դիրքերը աշխարհի տարանցիկ քարտեզի վրա, այլեւ ստեղծել ավելի անվտանգ ապագա:

**«*Պարսից ծոց-Սեւ ծով միջանցքը՝ ապագային միտված մայրուղի*» վերնագրով «azarpazhouh» կայքի ուշագրավ խմբագրականն արտացոլում է Հայաստանի հետ Իրանի միջպետական սահմանի բացակայության դեպքում իրանական կողմի պատկերացրած նոր երթուղին: Մասնակի կրճատումներով ներկայացվում է ներքոյյալ վերնագրով խմբագրականի թարգմանությունը.**




Կովկասի աշխարհաքաղաքական գերխնդիրների եւ որոշ տարածաշրջանային ու միջտարածաշրջանային խաղացողների վերջին տեղաշարժերի պայմաններում, Իրանը, օգտագործելով սեփական ինտելեկտն ու ռազմավարական տեսլականը, ակտիվացնում է իր եզակի աշխարհագրական ներուժը:

Այն իրավիճակում, երբ որոշ տերությունների աջակցությամբ «Զանգեզուրի միջանցքի» նման նախագծերը սկսում են սահմանային հարցերում բացասաբար անդրադառնալ Իրանի վրա, Թեհրանը կենտրոնանալով «Պարսից ծոց-Սեւ ծով միջանցքի» զարգացման եւ Ջուլֆա-Հայաստան-Վրաստան-Սեւ ծով երկաթուղու գործարկման վրա, կարող է ամրապնդել իր աշխարհաքաղաքական եւ տնտեսական դիրքերը:

Այս նախագիծը ոչ միայն նոր տարանցիկ ուղի է, այլ՝ տարածաշրջանում առկա սպառնալիքներին ու մարտահրավերներին ուղղված Իրանի նոր հաղթաթուղթը:

## Զանգեզուրի եւ արտաքին ազդեցության դեմ Իրանի պաշտպանական վահանը

Վերը նշված միջանցքի կարեւորությունը չի սահմանափակվում միայն դրա տնտեսական չափումներով: Ավելի շուտ, այն Կովկասի աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում Իրանի համար պաշտպանական եւ ռազմավարական վահանի դեր է կատարում:

Այդ մեխանիզմների թվին են պատկանում՝

## Զանգեզուրի միջանցքի սպառնալիքին հակազդելու միջոց

Զանգեզուրի միջանցքը, որի ձեւավորմանը միջնորդաբար մասնակցում են որոշ արտատարածաշրջանային տերություններ, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ն եւ Իսրայելը, կարող է թուլացնել Իրանի պատմական եւ աշխարհաքաղաքական սահմանների դերը տարածաշրջանում եւ մեծացնել Կովկասում օտարերկրյա դերակատարների ազդեցությունը: Պարսից ծոց-Սեւ ծով միջանցքի ակտիվացումը հենց այս սպառնալիքին ուղղված կանխարգելիչ միջոցառում է:

## Հյուսիսային սահմանների ամրապնդում եւ օտարերկրյա ազդեցության նվազեցում

Հյուսիսային սահմաններում կայուն եւ ռազմավարական երթուղի ստեղծելով՝ Իրանը կարող է կառավարել Կովկասում օտարերկրյա դերակատարների ազդեցությունն ու ներկայությունը եւ ամրապնդել տարածաշրջանային անվտանգությունը՝ բարեկամ երկրների հետ համագործակցելով: Այս միջանցքը հնարավորություն է՝ ամրապնդելու տարածաշրջանային կապերը եւ նվազեցնելու կախվածությունը մրցակիցների ազդեցության տակ գտնվող երթուղիներից:

## Պարսից ծոց-Սեւծով միջանցք.
### *Քառակի կապ եւ բազմաթիվ առավելություններ*

Այս երազանքների միջանցքը, սովորական տրանսպորտային ուղի լինելուց բացի, չորս կարեւոր ծովային ավազանների (Պարսից ծոց, Օմանի ծով, Կասպից ծով եւ Սեւ ծով) միմյանց կապող կարեւոր զարկերակ է:

## Հարավային նավահանգիստները Եվրոպային կապող երթուղին

Այս երթուղին Իրանի ռազմավարական նշանակության հարավային նավահանգիստները ուղղակիորեն կապում է Եվրոպայի կենտրոնի հետ՝ Հայաստանի, Վրաստանի, ապա Սեւ ծովի միջոցով: Այս կապը մեծ հնարավորություն կընձեռի Իրանի միջազգային առեւտրի համար:

## Ծախսերի եւ ժամանակի զգալի կրճատում

Ըստ հաշվարկների, այս միջանցքի լիարժեք գործարկմամբ Ասիայի եւ Եվրոպայի միջեւ ապրանքների տարանցման արժեքն ու ժամանակը կարող են կրճատվել համապատասխանաբար՝ 30%-ով եւ 40%-ով: Այս թվերը առաջացնում են աննախադեպ գրավչություն ամբողջ աշխարհի առեւտրականների եւ լոգիստիկ ընկերությունների համար:

## Քաղաքական եւ տնտեսական օգուտներ Իրանի համար

Այս միջանցքի գործարկումը քաղաքական եւ տնտեսական առումով խորը եւ լայնածավալ օգուտներ կբերի Իրանին, այդ թվում՝ կհանգեցնի Թուրքիայից կախվածության նվազեցմանը: Ներկայումս Իրանի ապրանքների եւ էներգակիրների տարանցումը դեպի Եվրոպա իրականացվում է Թուրքիայի միջով: Նոր միջանցքի ակտիվացումը թույլ կտա Իրանին նվազեցնել իր կախվածությունը մեկ երթուղուց եւ ունենալ առեւտրի դիվերսիֆիկացված տարբերակներ:

## Տարածաշրջանային եւ գլոբալ համագործակցության ամրապնդում

Այս միջանցքը բացառիկ հնարավորություն է ամրապնդելու Իրանի համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության, Շանհայի համագործակցության կազմակերպության եւ BRICS խմբի հետ:

Այս փոխազդեցությունները կամրապնդեն Իրանի դիրքերը համաշխարհային տնտեսությունում եւ ձեւավորվող դաշինքներում:

## Սակարկությունների հնարավորության աճ

Միջազգային տարանցիկ միջանցքներում Իրանի դերի աճին զուգընթաց՝ զգալիորեն կբարձրանա Իրանի սակարկությունների հնարավորությունը տարածաշրջանային եւ գլոբալ հարցերում: Իրանը կդառնա գլոբալ լոգիստիկ ցանցի հիմնական խաղացող:

## Ավելի անկաշկանդ համագործակցություն

Այս միջանցքի զարգացումը պահանջում է բազմակողմանի եւ կառուցողական համագործակցություն, եւ Իրանը նույնպես մեծ առաջընթաց է գրանցել այս հարցում: Հնդկաստանը, որպես մեծ եւ զարգացող տնտեսություն, հետաքրքրված է Եվրոպայի հետ առեւտրի այլընտրանքային եւ արդյունավետ ուղիներ գտնելով, եւ այս միջանցքը կարող է բավարարել նրա տարանցիկ կարիքները:

Բացի այդ, Հայաստանը, որպես այս տարանցիկ շղթայի հիմնական օղակներից մեկը, զարգացնում է իր տրանսպորտային ենթակառուցվածքներն Իրանի օգնությամբ եւ Եվրամիության հնարավոր աջակցությամբ:

Իրանական ընկերությունների ներկայությունը հայկական շինարարական նախագծերում նույնպես վկայում է այս համագործակցության կարեւորության մասին:

## Ճգնաժամային իրավիճակները հաղթահարելու հնարավորություն

Այս միջանցքը զուտ տնտեսական նախագիծ չէ. այն համապարփակ ռազմավարական ծրագիր է, որը խելացիորեն ամրապնդում է Իրանի աշխարհաքաղաքական, անվտանգային ու տնտեսական ցուցանիշները:

Այս նախագիծը ոչ միայն վճռական պատասխան է Զանգեզուրի միջանցքի նման նախագծերի կողմից առաջացող սպառնալիքներին, այլեւ բացում է հստակ ճանապարհ՝ կախվածությունը նվազեցնելու, Իրանի բանակցային հնարավորությունները մեծացնելու, ինչպես նաեւ տարածաշրջանային եւ միջազգային համագործակցությունը զարգացնելու համար:

Այս մայրուղու լիարժեք գործարկումով՝ Իրանը ոչ միայն կամրապնդի իր դիրքերը աշխարհի տարանցիկ քարտեզի վրա, այլեւ կստեղծի ավելի պայծառ ու ավելի անվտանգ ապագա իր առեւտրի եւ զարգացման ուղին հարթելու համար:

## Եթե ականատեսներս լռենք, Արեւմուտքի քաղգործիչն էլ չի խոսի

Նախկինում Կալիֆորնիայում պաշտոնավարած Բեռլինում Բաքվի դեսպանն իր հենարանն է համարում այդ նահանգի ադրբեջանական համայնք անվամբ օգտատիրոջ հրապարակումները, X-ում վերահրապարակում է դրանք: «Ինչպե՞ս է ՀՀ-ն դարձել այսքան մոնոէթնիկ, ի՞նչ է պատահել: Կարո՞ղ եք կռահել» ձեւակերպմամբ սեպտեմբերի 7-ին մի քարտեզ է ներկայացնում (Բիլալ Սելիմ Ֆիլիզի եւ Սեւան Նշանյանի կազմած), որ համեմատում է 1886-2024-ի պատկերը, որ «երեւակում» է, թե ՀՀ ներկա տարածքում խիտ բնակվում են նախկինում «մեծամասնություն» ազերի, կարափափախները, նաեւ՝ քրդերը, Պոնտոսի հույները: Սեպտեմբերի 5-ին հրապարակել էին Ժիրայր Լիպարիտյանի տեսանյութը՝ «Մենք էթնիկ զտում իրականացրինք 650 000 ադրբեջանցու հանդեպ...» խոստովանությամբ: «Լիպարիտյանն ավելի ազնիվ է, քան Արեւմուտքի շատ քաղ. գործիչներ, լրագրողներ, փորձագետներ», գրում են ազերիները: Լռելո՞ւ ենք:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

## Խաչատուր Միխիթարյան. «Նախքան փախստական ճանաչվելը ...»

Սա չէր կարող անառարկելի մնալ: Ես ներկայացրի շատ դիմում, եւ դատարանը ընդունեց, որ հայցվորը՝ Ստեփանակերտում ծնված 58- ամյա հայուհին Ադրբեջանում կարող է ենթարկվել խտրականության եւ ֆիզիկական բռնության, ուստի արտաքսումը դադարեցվեց: Փախստականի կարգավիճակի հարցը դեռեւս հստակ չէ:

**- Ձեր կարծիքով, ինչպե՞ս պիտի լուծվի ձեր հայցվորի(ների) ճակատագիրը:**

-Իմ վստահորդների գործը պետք է լուծվի այնպես, որ նախ հաստատվի, թե նրանք չունեն որեւէ երկրի քաղաքացիություն, իսկ ապա նրանք ճանաչվեն որպես փախստականներ Գերմանիայի Ապաստանի մասին օրենքի (AsylG) «3 հոդվածի հիմքով, քանի որ վերադարձի դեպքում նրանք Արցախում ենթարկվելու են Ադրբեջանի կողմից համակարգային խտրականության:

**-Նրանց անձնագրերում եղել է միայն 070 նշումը, Ադրբեջան նշված չէ, ճի՞շտ է:**

-Գրված է միայն՝ ՀՀ, Republic of Armenia, կոնկրետ ծննդավայր նշված չէ: Դա իհարկե չի համապատասխանում իրավական դասակարգմանը Արցախի՝ որպես Հայաստանից դուրս միավորի, եւ դժվարություն է ներկայացնում թե՛ Հայաստանում, թե՛ Գերմանիայում պետական մարմիններում հաշվառման ժամանակ: Բայց հիմա նյութեր եմ տեսել, որ այն մարդիկ, որ Արցախից են եւ ՀՀ քաղաքացիություն եւ անձնագիր են ստանում, նշվում է Ադրբեջան՝ որպես ծագման երկիր կամ՝ որպես ծննդավայր:

**-1991 թվականից հետո ծնվածների անձնագրում ինչպե՞ս պիտի գրվի Ադրբեջան:**

- Բացատրությունը հետեւյալն է. Քանի որ ՀՀ-ն ԼՂ-ն որպես պետական միավոր չի ճանաչում եւ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի Պրահայի հայտարարությունից հետո պաշտոնական քաղաքականությունը Արցախը ճանաչում է որպես Ադրբեջանի մաս:

**-Ունեցե՞լ եք այնպիսի հայցվորներ, որ 1991-ից հետո են ծնվել եւ նրանց անձնագրում գրված է ՀՀ, ուրիշ տեղավայր նշված չէ:**

-Կասելի վարչական դատարանի վճռում գրված է Մարտունի (Հայաստան): Նկատի ունեին ԼՂ-ի Մարտունին: Իրենք շատ հաճախ սխալներ են թույլ տալիս: Եղել է վճիռ, որում նշված է՝ Ստեփանակերտ, Ադրբեջան կամ՝ Խանքենդի, Հայաստան: Իրենք գիտելիքի կամ



իրազեկվածության պակասի պատճառով սխալ նշումներ են անում, որը պիտի ուղղել: Վերաձեւակերպել եմ՝ գրելով, թե նշումները չեն համապատասխանում առկա իրավական վիճակին:

**-Արցախի բռնագաղթից հետո քանի՞ հոգի է ԳԴՀ-ում փախստականի կարգավիճակ ստացել:**

-Չեմ տիրապետում նման վիճակագրության, քանի որ այն հասանելի է միայն Ներգաղթի եւ փախստականների դաշնային գերատեսչությանը: Նույնիսկ նրանք չեն կարող դա հստակ իմանալ, քանի որ հաճախ շփոթում կամ դասակարգում են Արցախից տեղահանված անձանց՝ որպես ՀՀ քաղաքացի: Հետեւաբար չեն կարող տիրապետել տեղեկատվության, թե ով է արցախցի:

**- Ձեր արցախցի հայցվորների մեջ քանի՞սն են փախստականի կարգավիճակ ստացել:**

-Ունեմ 15-ից ավել դատական գործընթաց, որ վերաբերում են Արցախից բռնագաղթած անձանց, նրանց ընտանիքներին: Մինչեւ հիմա վերջնական որոշում, վճիռ կայացրել է Կասելի վարչական դատարանը: Ունեցել եմ 3 տարբեր ընտանիքների վերաբերյալ որոշումներ, երբ դաշնային գերատեսչությունը նրանց կարգավիճակի մասին փաստերը հաշվի առնելով հետ է վերցրել իր որոշումը, բայց նույն ժամանակ չի տրամադրել դրական որոշում՝ այն վերապահելով հետագայի համար:

**-Իսկ հետագան ո՞ր մարմինը պիտի որոշի:**

-Դարձյալ Ներգաղթի եւ փախստականների դաշնային գերատեսչությունը:

**-Եթե դեռ որոշված չէ, ի՞նչ կարգավիճակով են այդ մարդիկ բնակվում Գերմանիայում:**

-Նրանք ԳԴՀ-ում բնակվում են որպես ապաստանի համար հայց ներկայացրածներ: Նրանց Գերմանիայում գտնվելը համարվում է օրինական այնքան ժամանակ, քանի դեռ գերատեսչությունը որոշում չի կայացրել: Սեպտեմբերի 10-ին ստացա Գիսենի վարչական դատարանում գտնվող մի գործ, որ կես տարուց ավել գերատեսչությանն ուզում էին համոզել, որ իրենց որոշումը սխալ է: Փաստերը հաշվի առնելով՝ այլ տարբերակ չունեին: Դատարանն իրենց ճնշում էր՝ուզում էր, որ գերատեսչությունը ներկայացնի իր հետեւությունը՝ առկա փաստերից ելնելով: Այդ պարագայում գերատեսչությունը նորից պիտի որոշում կայացնի: Ունեցել եմ նաեւ դատավարություններ, որ ապաստանի առաջին գործընթացն արդեն ավարտված է եղել եւ դրանից հետո մարդիկ եկել են ինձ մոտ, ես օրենսդրական փոփոխությունները կարգավիճակի մասին փաստերը ներկայացնելով կարողացել եմ ապաստանի երկրորդ գործընթացը բացել, որտեղ առաջին որոշումը վերանայվել է եւ արտոնել են, որ գործը նորից մտնի դատարան, քննության առարկա դառնա:

*(շարունակելի)*

## Նոր տիպի կառավարողներ են պետք

⇨1 Սոցցանցերով հիմա մարդկանց կարելի է դարձնել ուզած հանրույթը՝ ագրեսիվ, անպատմելի դաժանություններ անող, ամենանողկալի բնազդներն արթնացած, ամենանողկալի հրահանգներին ենթարկվող, ու սա այլեւս վաղուց բոլոր , հատկապես փոքր պետությունների համար անվտանգության սպառնալիք է:

Ու նայելով մեր սոցցանցերի վիճակը՝ ոչ մի լավատեսություն այս առումով չենք փայփայում, հատկապես վերջին խորհրդարանական միջանձնային սկանդալի պարագայում, երբ իրար վիրավորանքներ հասցեագրած Թագուհի Թովմասյանին եւ Արթուր Հովհաննիսյանին այս օրերին պարզապես համացանցում բզկտեցին դիմակա բանակների ֆեյքերն ու նրանց հարակից՝ այսպես կոչված կանայք ու տղամարդիկ, հատելով բարոյականության եւ էթիկայի ամեն սահման:

Այս բոլորն ասվում է՝ցույց տալու համար, որ ատիճանաբար, ուզենք, թե չուզենք, սխալ, թե ճիշտ՝ սոցցանցերն ու անհատները, հատուկ ծառայությունները կարող են ավելի շատ ազդել հանրային կարծիքի վրա՝ դուրս մղելով քաղաքական ուժերին եւ նրանց հին, ծանրաշարժ մեթոդները: Ու պետք է հետեւություններ անել այս բոլորից:

Բայց նոր սկսված խորհրդարանական սեզոնն, ընդհակառակը, նորից ի ցույց դրեց մեր քաղաքական ուժերի որդեգրած հին ֆորմատն իր ողջ փայլով՝ միմյանց դիմակայելու կոշտ մեթոդներով, անցյալի նույն պաթոսով, որի համար նոր առիթ կար՝ օգոստոսին Վաշինգտոնում նախաստորագրված երկկողմ հռչակագիրը Թրամփով-բանով: Ու այդ դիմակայությունը հատկապես վառ դրսեւորվեց Վճռաբեկ դատարանի անդամի թեկնածուի առաջադրման, Հակակոռուպցիոն հանձնաժողովի տարեկան հաղորդման քննարկումներին եւ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին:

Մեր քաղաքական ուժերից ոչ ոք չի կարող, իհարկե, ինքնուրույն գլխի ընկնել, որ ճիշտ են իրենք, թե սխալ՝ ,մարդիկ վաղուց հոգնել են իրենց գոռգոռոցից, իշխանական եւ ընդդիմադիր գոռգոռացողներից հավասարապես: Ու անգամ եթե Նիկոլ Փաշինյան՝ Թրամփի երթուղու վերաբերյալ ինքնիշխանի, իրավազորի եւ մյուս սկզբունքների առումով փորձում է համոզել, կամ Աննա Գրիգորյանի եւ Գեղամ Մանուկյանի կոռուպցիոն բացահայտումներն իրոք ցնցող են, Արծվիկ Մինասյանն ու Հայկ Կոնջորյանը՝ պերճախոս, բայց մարդկանց մեծ մասն արդեն ոչ ընդդիմության, ոչ իշխանականների ճշմարտություններն է լսում:

Ու չգիտենք, որտեղի՞ց Ալեն Սիմոնյանի համոզվածությունը, որ իր նկարի շուրջ ավելի շատ մարդ կհավաքվի, քան ընդդիմության շուրջ, ախր բոլորիցդ՝ նույն բովանդակությամբ, նույն բառերով ձեր մշտական էքսցեսներից է խոնջացել լայն հանրությունը (ոչինչ անձնական՝ ամեն օր բազմաթիվ մարդկանց հետ շփվելով՝ հանրության մեջ տարածված տեսակետն եմ փոխանցում):

ԱԺ-ն վաղուց եւ հիմա հատկապես քաղաքական կշիռը կորցրել է, եւ եթե իր գործունեությամբ Հայաստանի հետ պատահած ճակատագրական իրողություններում չի կարողացել վճռորոշ դերակատարում ստանձնել, միգուցե հիմա է ժամանակը հենց, որ լուծարմամբ, քանի դա օրենսդրորեն հնարավոր է, մի քանի հարց կարողանա լուծել.

-Կանգնեցնի հասարակությունը հյուծող նիհիլիզմն ու անվստահությունը (ե՛ւ իշխանության, ե՛ւ ընդդիմության հանդեպ)՝ նոր ընտրություններով առաջ նայելու հնարավորություն տալով:

-Զարդի անվերջ մեր գխին իշխանություն ձեւավորելու սխեմաներ կոտրելու աշխարհաքաղաքական նախագծերը՝ մենք մի փոքր ժամանակ կշահենք ընտրական ժամանակում չկատարելով այս ու այն արտաքին պարտադրանքները:

-Դանդաղեցնի գոնե մի պահ Հայաստանն իրենցով անելու տնտեսական նախագծերի պարտադրման արագությունը:

-Կանգնեցնի արհեստական քաղաքական միավորներ ստեղծելով մեր ներքին գործերին արտաքին միջամտությունները:

Հանրության լայն շերտերն արդեն բոլորին տեսել են, բոլորին գիտեն ու այս անգամ թող ընտրության գնան ոչ թե նախապես հստակ գծված ու տարբեր տեխնոլոգիաներով պարտադրվող քաղաքական քարտեզներով, այլ իրենց տեսածով եւ խղճով առաջնորդվելով, իրենց կարծածով հեղինակավոր մարդկանց առաջ մղելով, փորձելով ընտրել առանց քաղաքական, ֆինանսական եւ այլ պարտադրանքների: Չթողնելով, որ մեր երկրի բոլոր հարցերը մշտապես կուլիսներում լուծող մաֆիոզ խմբերն ինքնակազմակերպվեն, նախապես խորհրդարանի գրպանային կազմ հավաքեն ու կոտրեն Հայաստանի գլխին,գոնե այս անգամ դրա դեմն առնվի: Հաստատ հիմիկվանից ավելի նորմալ մարդիկ կանցնեն խորհրդարան, քան ինչ-որ սեւ կարդինալների գծած քարտեզներով եւ իբր ընտրությամբ պարտադրվածների դեպքում: Որ քաղաքական ուժը վստահ է՝ վարկանիշ ունի, անհանգստանալու կարիք չունի: Չասենք՝ ժամանակը չէ, հենց ժամանակն է՝ առաջ անցնելով աշխարհաքաղաքական, տեղական քարտեզագիրներից, խառնելով նրանց հաշիվներն ու մեզ պարտադրվելիք արհավիրքները գոնե ժամանակային առումով հեռացնելով՝ հարաբերականորեն գտնված այս ժամանակի մեջ, երբ մեծերը դեռ զբաղված են տաք օջախներում:

Եվ պետք է անպայման մտածել, որ այժմ հարկավոր են այլ տիպի կառավարողներ, որոնք շեշտը կդնեն ոչ թե հակադրությունների վրա, այլ համերաշխությամբ, կոմպրոմիսներով, համդարտորեն խնդիրներ լուծելու վրա, քանի որ հակադրությունների ձեւաչափը հոգնեցրել է մարդկանց, որոնք այլեւս նյարդեր չունեն գոռգոռոց լսելու, ընդհանրապես սկսել են չլսել ելույթները, չկարդալ տեքստերը, կարդում են վերագրերն ու անցնում, դուք բոլորդ մարդկանց անտարբեր եք դարձրել՝ տարիներով դիմակայության նույն ալիքի վրա մնալով:

Մեզ այժմ պետք է ոչ թե քաղաքական հակադրությունների այս ամենօրյա թատրոնը, այլ լուծումների վերաբերյալ տարբեր մոտեցումների մրցակցություն, նոր ֆորմատի իշխանությունն իր հետ կբերի նոր իշխանավորների՝ պրոֆեսիոնալների ներառելով բոլոր կայացած քաղաքական խմբերից, հասարակության լայն շերտերից, որ դատախազությունը, քննչական կոմիտեն, հակակոռուպցիոն կոմիտեն եւ այլ կառույցներ այսքան լցոնված չլինեն ինչ-որ աջիկներով: Չե՞ք զգում, որ մարդկանց նյարդերից, կյանքից տանող ձեր գոռգոռոցն էլ լայն սպառող չունի: Անգամ սպառում չունի «Արեւմուտք, թե՞ Ռուսաստան» կեղծ օրակարգը, մարդիկ լինում են արտերկրում, եվրոպաներում ու տեսնում են մարդկային կեցության իրական օրակարգեր: Ու պետք չէ այսքան կենաց ու մահու հարց դարձնել իշխանության գալը կամ մնալը, վարչապետի ու ԱԺ նախագահի պաշտոնը պահպանելը, Հայաստանը նոր իրավիճակներում, նոր աշխարհակարգում պետություն մնալու խնդիր ունի, ու այս ներքին թշնամությունը խանգարում է կենտրոնացնել ուժերը:

Մի մոռացեք սոցցանցերը, մարդկանց կարիքների եւ տեսակետների անտեսումը, տեսեք՝ Ֆրանսիայում եւ Նեպալում ինչ է կատարվում՝ ոչ մենք ենք հատուկ տեսակի, ոչ այլ երկրների հատուկ ծառայությունները կհապաղեն:

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Նիկոլայ Մադոյան. «Երաժշտությունը ոչ միայն շարժում է սիրտը, այլեւ նորոգում է հոգին»

*Սկիզբը՝ նախորդ համարում*

**-Եթե ձեր ջութակն ունենար հիշողություն, ո՞ր պահերն էր ամենաշատը հիշելու:**

-Ինչու՞ «եթե»: Ջութակն իսկապես ունի՛ հիշողություն: Ես նվագում եմ մի գործիք, որը ստեղծվել է դարեր առաջ, եւ ինչպես իր նման բազմաթիվ ջութակներ, կրում է նախորդների հոգին: Այս գործիքները հաճախ կրում են այն մեծ ջութակահարների անունները, որոնք նվագել են դրանք:

Ասացի, թե որքան եմ հիացել Սարասատեի երաժշտության Հեյֆեցի կատարումներով: Ավելի խորհրդավոր է դառնում այն փաստը, որ նա նվագել է հենց Սարասատեի անձնական ջութակը: Պատմությունը ներկառուցված է հենց գործիքի փայտի մեջ:

Դիպչելով ճշմարիտ վիրտուոզի մատներին՝ ջութակը փոխակերպվում է: Այն դառնում է ավելի մեծ մի ամբողջության շարունակություն, որտեղ ջութակահարը հնչեցնում է անցյալի արձագանքները՝ միաժամանակ ներդնելով իր բաժինը դրա կենդանի հիշողության մեջ:

**-Ի՞նչը մարդիկ առավել հաճախ չեն հասկանում ջութակահարի մասնագիտության մեջ:**

-Շատերը, հավանաբար, չեն հասկանում ջութակ նվագելու դժվարությունն ու կատարողական վարպետություն ձեռք բերելու համար անհրաժեշտ ջանքն ու նվիրումը: Այն ամենաբարդ գործիքներից է, եւ բեմում հեշտությամբ նվագելու պատրանքը կարող է խաբուսիկ լինել: Երբ երաժիշտը կատարում է բարդ ստեղծագործություն՝ կարծես առանց ճիգերի, դժվար է նկատել դրա ետեւում առկա տարիների շարունակական աշխատանքը, կարգապահությունը եւ զոհաբերությունը: Բեմում հանդիսատեսը տեսնում է նրբություն ու գեղեցկություն, բայց ո՛չ այն անռելի աշխատանքը, որը պահանջվել է, որպեսզի այդ բարդը երեւա բնական: Բացի այդ, անկախ այն բանից, թե ինչպես ենք զգում ֆիզիկապես կամ հոգեպես, բեմում, թե ձայնագրման ստուդիայում, մենք պետք է պատրաստ լինենք եւ անթերի նվագենք՝ ցույց տալու մեր եւ մեր արվեստի լավագույնը:

**-33 ժամ անընդմեջ նվագելուց հետո (որը Գինեսի ռեկորդների գրքում գրանցվեց որպես «պաշտոնապես ապշեցուցիչ») փոխվե՞ց ձեր հարաբերությունը երաժշտության հետ:**

-Անպայմա՛ն: Այդ փորձառությունը փոխեց ինձ: Շատերը չեն գիտակցում, որ երաժշտությունը տարբեր կերպ է ազդում մեզ վրա՝ կախված օրվա ժամից: Մեր մարմինն արտասովոր խելացի է, եւ մեր ներքին համակարգը ցերեկվա եւ գիշերվա ընթացքում յուրահատուկ



*Լուսանկարները՝ Խանդութ Պարույրյանի*

կերպով արձագանքում է ձայնին՝ ազդելով ամեն ինչի վրա՝ տրամադրությունից մինչեւ ներքին ռիթմերը:

Կան համոզիչ գիտական հետազոտություններ, եւ հայրս, որը խորապես մասնագիտացած էր նյարդաբանության մեջ, հայտնաբերել է, թե ինչպես է երաժշտությունն ազդում ուղեղի եւ մարմնի վրա: Այդ 33-ժամյա կատարման ընթացքում ես իսկապես զգացի էներգիաների տատանումները, երաժշտության զգացմունքային արձագանքը: Ես փորձարկում էի իմ սահ-



*Նիկոլայ Մադոյանը վաղ երիտասարդության տարիներին*

մանները՝ մտավոր, ֆիզիկական եւ հոգեկան: Եվ հասա կարեւոր գիտակցման՝ մարդու ներուժը շատ ավելի մեծ է, քան մենք հաճախ պատկերացնում ենք: Երբ խորապես կապվում ես ինչ-որ բանի հետ եւ անկեղծ հավատում դրան, սահմանները սկսում են ջնջվել:

Այդ «ճանապարհորդությունն» ինձ տվեց նաեւ եզակի տեխնիկական ազատություն՝ թույլ տալով կենտրոնանալ արվեստի էության եւ երաժշտության գլխավոր բովանդակության վրա: Սա մի նվեր է, որն ինձ շնորհեց այդ փորձառությունը եւ որը ես կրում եմ իմ յուրաքանչյուր կատարման մեջ:

**-Բեմ դուրս գալիս, հատկապես Պագանինիի 24 Կապրիսների պես ծրագրերի համար, ունե՞ք մտավոր կամ ֆիզիկական վարժություններ, որ կատարում եք նախապես:**

-Ես չեմ սիրում ակտիվ նախակատարումներ համերգից անմիջապես առաջ: Փոխարենը, նախընտրում եմ ներամփոփվել՝ խորհելով այն արվեստի եւ գաղափարական էության մասին, որը պատրաստվում եմ ներկայացնել: Ավելի շատ մտածում եմ մեկնաբանությունս բեմում կենդանացնելու, ոչ թե հատվածները մեխանիկորեն կրկնելու մասին:

**-Կյանքում երբեւէ վախ զգացե՞լ եք կատարման ընթացքում, որ կմոռանաք, կձախողվեք կամ կշեղվեք պահի ծանրությունից:**

-Ո՛չ: Ինձ համար իսկական աշխատանքը կատարվում է համերգից առաջ: Երբ դուրս եմ գալիս բեմ, հենվում եմ ամուր հիմքի վրա, որը կառուցվել է ակտիվ պատրաստության միջոցով եւ որն աջակցում է այն ամենին, ինչը ձգտում եմ արտահայտել: Ես ճշգրիտ գիտեմ, թե ինչպես պետք է զարգանա կատարման գաղափարը: Այդ հստակությունն ինձ լիակատար վստահություն է տալիս: Իսկ երբ ադրենալինը փորձում է գերիշխել, ես ոչ թե ճնշում, այլ փոխակերպում եմ այն: Ես դրան մոտենում եմ հոգածությամբ եւ գիտակցված կերպով՝ թույլ տալով, որ այն վերածվի ստեղծագործական էներգիայի: Ես այն ուղղորդում եմ ծառայելու երաժշտությանը: Այդպիսով ստեղծվում է յուրահատուկ միջավայր, որտեղ յուրաքանչյուր տարր լրացնում է մյուսին եւ ամեն ինչ միավորվում է միասնության զգացողության մեջ:

**-Հայաստանն ունի երաժշտական հոգի՝ հնչերանգ, ռիթմ, թաքնված ձայնեղանակ: Ի՞նչ է դա ձեզ համար եւ ինչպե՞ս եք այն փոխանցում համաշխարհային բեմերից:**

-Ինձ համար այն կարոտի ձայնն է՝ մոդալ, նուրբ, ինչպես հնագույն մի օրհներգ, որը հառնում է մեր քարերից ու լեռներից: Դա պարզապես տոնայնություն չէ, այլեւ հիշողություն: Այդ ձայնն ապրում է իմ ներսում, եւ ես այն տեղափոխում եմ աշխարհի բեմերը, որպեսզի նույնիսկ Փարիզում կամ Տոկիոյում կարելի լինի լսել Հայաստանի եւ Արցախի արձագանքն իմ կատարումներով:

Ինձ համար «Կռունկը» խորհրդանշական ստեղծագործություն է՝ մեր ժողովրդի զգացմունքային դրոշմը: Ես այն կատարել եմ ողջ աշխարհի համերգասրահներում: Այն ունի խորություն եւ ինքնություն, որոնք խոսում են այն մասին, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս եւ ինչ ունենք մեր սրտում:



**-Ո՞վ եք դուք առանց ջութակի:**

-Կյանքն առանց բեմի եւ ջութակի անհնարին է. ջութակը դարձել է իմ շարունակությունը, եւ առանց նրա ես զգում եմ անբացատրելի ներքին խառնաշփոթ: Ուստի, աղեղից եւ բեմից անդին ինձ հետ կապված քիչ բան կա, որը կարող է առանձին լինել: Ինձ համար ջութակն ավելին է, քան գործիքը: Դարերի ընթացքում տարբեր միջավայրերում արձագանքած նրա ձայնն ինձ հույս է ներշնչում, ուժ է տալիս և հոգևոր բավարարվածություն է պարգեւում:

**-Ինչպիսի՞ն է ձեր ոչ երաժշտական օրը:**

-Ես շատ ժամանակ եմ անցկացնում մարզասրահում ու լողավազանում: Ամռանը սիրում եմ թենիս խաղալ ընկերներիս հետ. սա գալիս է մանկությունից: Սիրում եմ նաեւ հեծանիվ քշել՝ նոր ուղղություններ բացահայտելու եւ բնությունը վայելելու համար:

**-Ինչպիսի՞ն կլինեն դասական համերգները 50 տարի անց: Մերօրյա ավանդույթները դեռ արդիակա՞ն են, թե՞ անհրաժեշտ կլինի ամբողջությամբ փոխել ձեւաչափը:**

-Իհարկե, ձեւաչափերը կփոխվեն: Տեխնոլոգիան կարող է փոխել ձայնի մեր զգացողությունը եւ այն, թե ինչպես ենք տեսնում կամ լսում կատարողին: Նույնը վերաբերում է նաեւ համերգային ձայնագրություններին. արհեստական բանականության ակտիվ զարգացումը ստիպում է որոշ հնչյունային ճարտարագետների կիրառել այն՝ ստանալու կատարումների ճշգրիտ պահերը նոտաներին համապատասխան: Բայց հիմնականում անփոփոխ կմնա էությունը՝ կատարողի, երաժշտության եւ ունկնդրի միջեւ խոր զգացմունքային երկխոսությունը: Դա սրբազան է:

Մարդիկ միշտ ձգտում են էներգիայի փոխանակման: Վստահ եմ, որ մենք բնորոշ ձգտում ունենք կապվելու՝ միմյանց հետ, հնչյունների հետ, պահի հետ: Մենք համերգներ չենք գնում միայն լսելու, մենք գնում ենք միասին զգալու: Դա այն է, ինչը երբեք չեն կարող փոխարինել էկրանները, ալգորիթմները կամ արհեստական բանականությունը: Մարդիկ բնույթով զգացմունքային են: Բախը, Մոցարտը, Վիվալդին վերացական ինտելեկտուալներ չէին: Նրանք սիրել են, տառապել, պայքարել, զգացել: Եվ նրանց երաժշտությունը դեռ մեզ հետ խոսում է, քանզի ծնվել է ճշմարիտ մարդկային փորձառությունից

Ես չեմ կարծում, որ դասական երաժշտության ավանդույթները երբեւէ կարող են հնանալ: Դրանք ժառանգություն չեն, այլ հիմնաքարեր: Բարձր արվեստը երբեք չի կարելի հարմարեցնել նոր միտումներին: Մենք, որպես արվեստագետներ եւ ունկնդիրներ, շարունակելու ենք ինքնությունը հաստատել այն լավագույնով, ինչ ստեղծել է մարդկությունը: Մարդկային զգացմունքների հույզը, որը ստեղծվում է երաժշտության միջոցով, միշտ պետք է պահպանվի:

**-Ողջ աշխարհում հանդես գալուց, մեծ վարպետների մոտ սովորելուց եւ ջութակահարի սահմանները վերաձեւավորելուց հետո, ի՞նչն է դեռեւս ձեզ անհասկանալի ջութակի հետ կապված: Ի՞նչ գաղտնիքներ կան:**

-Կարծում եմ՝ կատարյալն անսահման է: Որքան էլ սովորեմ, կատարեմ կամ հայտնաբերեմ, միշտ կա ավելին՝ ավելի խորություն, ավելի շատ գույներ եւ նրբերանգներ, որոնք կարելի է հայտնաբերել ջութակի միջոցով: Միշտ բացահայտում եմ ձայների նոր գունապնակներ, որոնք կարող եմ ձեւավորել եւ կատարելագործել, եւ այդ գործընթացն իրականում երբեք չի ավարտվում: Դա է գեղեցկությունը: Իրական սահմանի բացակայությունը տալիս է ինձ էներգիա, նպատակ, ուրախություն: Անսահման կատարյալի այս ձգտումն է, որ խթանում է երաժշտության հանդեպ իմ կիրքի եւ ստեղծագործականության աճը: Ջութակի գաղտնիքն այն իրողության մեջ է, որ այն շարունակաբար փոխակերպվում է արվեստագետի հետ, եւ դա է իմ արվեստի ճանապարհորդության իմաստը...

# Նոր Բուխենվալդ ու Դախաու... Պաղեստինում





➪1 Նույն զեկուցաբերների վկայությամբ, Գազայում գործող հիվանդանոցների եւ բուժկետերի ուղիղ նշանառությամբ շարքից դուրս են եկել բուժաշխատողները, որոնք արդեն ոչինչ չէին կարող անել ոսկոր ու կաշի մնացած երեխաներին բուժելու համար, որոնց ամենօրյա լուսանկարները հիշեցնում են, կրկին, մեր բազմահազար որբուկներին՝ թուրքական եղեռնագործության օրերին: Ոչնչացվում է, փաստորեն, եւս մի ազգաբնակչության ապագան, մեթոդական, ծրագրային գործողություններով՝ «Էրեց յիզրայել շլեմա» («Իսրայելի սուրբ հողը») սեմիտական նույն ընտանիքի մեկ այլ անդամի՝ արաբներից ազատելու գերագույն նպատակին հասնելու համար:

***

Իսրայել պետության հիմնադիր հայրիկ ու մայրիկ՝ Դավիթ Բեն Գուրիոնից մինչեւ Գոլդա Մեյիր եւ ուրիշներ, 1946-ին Նյուրնբերգի արդարագույն դատավարության ընթացքում եւ այնուհետեւ Սան Ֆրանցիսկոյում ՄԱԿ-ի ստեղծման շուրջ կայացող խորհրդակցություններում, Իսրայել պետությունը եւ «Ավետյաց երկրում» հրեաների ազգահավաքը իրականացնելու նպատակով առաջ էին քաշում ոչ միայն Հին կտակարանի դրույթները, այլեւ փորձում էին համոզել ֆաշիստական Գերմանիային տապալած երկրների ներկայացուցիչներին, որ հրեական պետության ստեղծումը օրհնություն կլինի տարածաշրջանի արաբական «հետամնաց ու տգետ» ժողովուրդների համար: Բացարձակ սուտ, որը կուլ տալու պատրաստ էին Անգլիան, Ֆրանսիան, մյուս երկրների ներկայացուցիչները, որոնք ամենից լավ գիտեին Բեյրութում արդեն 50 տարի գործող Ամերիկյան եւ ֆրանսիական, Կահիրեի անգլիական եւ այլ համալսարանների առկայության մասին: Պատեհապաշտությունը հաղթեց, բայց օդում մնաց, ֆրանսիական ձեւով ասած՝ mais oui առաջարկը՝ ստեղծել Իսրայել պետություն «երկու ժողովուրդ եւ մեկ պետություն» սկզբունքով, որը մինչեւ օրս կախված է մնում օդում: Միակ պետությունը, որն ինչ-որ չափով հակառակ էր եւ միշտ ձգտել էր ունենալ իրեն վասալ պետություն՝ Հաշեմական թագավորության երկիր Հորդանանը՝ Երուսաղեմը ներառյալ, ընդդիմացավ տարանջատության գաղափարին, որի համար կրեց ծանր հարված. 1947 թ.ին Երուսաղեմի King David հյուրանոցում բրիտանական բանակի սպայակույտի 110 անդամներ զոհ գնացին հրեական ահաբեկչական գործողության, իսկ մինչ այդ կոտորածներ էին կազմակերպվել Խան Յունեսի արաբ ազգաբնակչության դեմ:

Ահաբեկիչները հրեաներ էին, Լեհաստանի հրեական գետտոյի դաժան պայմաններից մազապուրծ մի խումբ երիտասարդներ, «Իրգուն» ահաբեկչական գաղտնի կազմակերպության անդամ, որոնք հետագայում, Իսրայելի Քնեսեթում ստեղծեցին Լիքուդ կուսակցություն-համախմբումը, որի ղեկավարները՝ Մենախիմ Բեգինից եւ հետագայում լիբանանաբնակ պաղեստինցիների հայտնի ջարդարար Արիել Շարոնից մինչեւ օրս, հանձին վարչապետ Բենյամին Նեթանյահուի, գործում են սանձարձակ եւ անարգել:

Ի՞նչ տվեց Հրեական պետության հիմնադիրների խոստումը տարածաշրջանի եւ Պաղեստինի արաբ ժողովրդին որպես «խաղաղակերտություն». երեք պատերազմ, բազմաթիվ ջարդեր, որոնք սկսվեցին 1947-ին Խան Յունեսից ու շարունակվեցին Պաղեստինի ամբողջ տարածքով, Հորդանան գետի արեւելյան եւ արեւմտյան ափերով հանդերձ, ինչը շարունակվում է մինչեւ օրս, մեր ժամանակներում ընդունված, Արցախի ժողովրդի դեմ կիրառված «էթնիկ զտման» սկզբունքով, որը, ի դեպ, ի գիտություն մեր անգետ պատմաբանների, կիրառվել է նույնպես Ցեղասպանությունից հրաշքով փրկված եւ Հայֆա, Յաֆա նավահանգիստներ ապաստանած մեր հայրենակիցների դեմ, որոնք ստիպված են եղել մի գիշերում «ափյափոյ» նավ նստել եւ ապաստանել Բեյրութ, Թրիփոլի, Լառնաքա եւ Ալեքսանդրիա արաբական նավահանգիստներ՝ իրենց ետին թողնելով գաղթականի խեղճուկ տները, եկեղեցիներն ու մանկապարտեզները, այնպես՝ ինչպես իրենց ճակատագրակից պաղեստինցի արաբները, որոնք հարյուր հազարներով կոտորածներից փախուստ տվել եւ գաղթակայաններ են ստեղծել Լիբանանում, Սիրիայում եւ այլուր, եւ որոնք մինչեւ օրս օդային հարձակման են ենթարկվում իսրայելական Kfir-ների, ամերիկյան F16-երի կողմից:

Բոլորի ու բոլորիս աչքի առաջ այսօր ի գործ են դրվում էթնիկ զտման բոլոր տարբերակները բնիկ պաղեստինցի, եթե կուզեք՝ Հին կտակարանի փղշտացի ժողովրդի դեմ Գազայում, նրանց վերջին հանգրվանում: Նաեւ՝ աչքի առաջ հենց արաբական հարուստ ու բարգավաճ երկրների իշխանությունների, ընդդեմ իրենց իսկ ժողովրդի ցանկության ու կամքի, նաեւ եվրոպական երկրների ու հատկապես Մ. Նահանգների, որոնք այսօր թեեւ խոսում են եւ փարիսեցիաբար հանձնարարում են «Մեկ պետություն, երկու ժողովուրդ» բանաձեւը, բայց քաջ գիտեն, որ Բենիամին Նեթանյահուն ու նրա նման ցեղապաշտ արմատականները մերժելու են այն, ինչպես 1987 թ.ին մերժեցին ու մահվամբ պատժեցին վարչապետ Յիցհակ Ռաբինին, ինչպես 1980 թ.ին, մյուս կողմից, արաբ արմատականները, որոնք, ի դեպ, Արեւմուտքի ու Թուրքիայի օգնությամբ այսօր իշխում են Սիրիայում, Կահիրեում զինվորական շքերթի ժամանակ սպանել էին նախագահ **Անուար Սադաթին**, որը Քեմփ Դեյվիդում, ամերիկյան օրհնությամբ, խաղաղ համակեցության համաձայնագիր էր ստորագրել Մենախիմ Բեգինի հետ...

Այո, մահվան սպառնալիք կա նրանց նկատմամբ, այս կամ մյուս կողմից, բոլոր նրանց նկատմամբ, ովքեր փորձում են լուծում գտնել, նույնիսկ ազդել լուծման նախապայմաններ ստեղծելու գործընթացի վրա, ինչպես պատահեց 1984 թ.ին, երբ աշխարհում նավթի մեծագույն հայթայթիչ Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆայսալի հետ, որին, հենց պալատում, հենց իր իսկ ազգականի կողմից, որը կրթություն էր ստացել Մ. Նահանգներում, սպանվեց, որովհետեւ **ամբարգո** էր հայտարարել դեպի Արեւմուտք հոսող նավթի վրա, որպեսզի ստիպի Իսրայելի երդվյալ դաշնակից Վաշինգտոնին փոխելու իր դիրքորոշումը պաղեստինցի արաբ ժողովրդի շահերն ու իրավունքները հաշվի առնելու ուղղությամբ եւ ի դատապարտումն Իսրայել պետության, որի վարչապետ Արիել Շարոնի հրահանգով Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի արեւմտյան՝ Սաբրա եւ Շաթիլա արվարձանի գաղթակայանում մեկ օրում 3400 երեխաների, կանանց ու ծերունիների ջարդ կազմակերպեց:

Ես անձամբ, Բեյրութի Թեքեյան կենտրոնի 9-րդ հարկի տանիքից, մեր անմոռանալի եւ ամենագետ բանասեր ընկերոջ՝ վաղամեռիկ Ժիրայր Դանիելյանի հետ այդ օրը հետեւում էինք այդ սպանդի օդային նախապատրաստությանը, երբ իսրայելական «Քֆիր» կործանիչները, տեսնելով ներքեւում Պաղեստինի ազատագրության կազմակերպության՝ ՖԱԹՀ-ի զինյալների զենիթային հրանոթների արկերի սպառումը, անարգել վայր էին խոյանում ու ռումբեր արձակում անպաշտպան մնացած ժողովրդի վրա:

Դրանից որոշ ժամանակ անց, նույն կետից, Ժիրայրն ու ես գետնին պառկած հետեւում էինք ՖԱԹՀ-ի զինված ստորաբաժանումների, գլխավորությամբ առաջնորդ Յասեր Արաֆաթի, Բեյրութի նավահանգստից ֆրանսիական ռազմանավերով մեկնումը դեպի Թունիս, որը եղավ անփառունակ վախճանը պաղեստինյան դիմադրության, որը եղավ նաեւ, պետք է նշել, վախճանը, փաստորեն, Հայաստանի ազատագրության հայկական գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ), որը, ոմանք ընդունեն կամ ոչ, հովանավորում էր ազգային ազատագրական պայքարի շարժումները, ներառյալ հայկականը:

Ի դեպ, նույն Յասեր Արաֆաթը, իր խորհրդավոր մահվանից մի քանի տարի առաջ, 1983-ին, ընդունել էր արդի ժամանակների մեր լավագույն պատմաբան Նիկոլայ Հովհաննիսյանին, վերջինիս հայտնել էր, ինչպես պրոֆեսոր Հովհաննիսյանն է ինձ պատմել, որ Հայկական դատի խոցելի գլխավոր կետը Ցեղասպանությունից հետո վտարանդի դարձած արեւմտահայության եւ կիլիկեհայության ընդունումն էր հյուրընկալ երկրների քաղաքացիության՝ հրաժարվելով Նանսենյան եւ այլ կարգի անձնագրերից: Մտածելու խնդիր է: Մանավանդ այս օրերին, երբ տնավեր ու վտարանդի դարձած արցախահայությունը, Հայաստանում չունենալով ուղեղ ունեցող պետական որեւէ խորհրդատվություն, հետամուտ է հայկական, առավել եւս՝ օտարերկրյա անձնագիր ձեռք բերելուն:

Վերադառնանք մեր բուն թեմային: Նեթանյահուի կառավարությունը հենց այս օրերին պատրաստվում է համընդհանուր հարձակման ենթարկել պաղեստինցիների վերջին ապաստանարան Գազան եւ հարակից տարածքները, ներառյալ՝ վերջնականորեն լուծել Հորդանան գետի Արեւմտյան ափի բնակավայրերը: Արմատական լուծում՝ հար եւ նման 1938-ի նացիստական Գերմանիայի իրականացրած anschluss-ի, երբ Հիթլերը Ավստրիան կցեց Գերմանիային: Այն տարբերությամբ միայն, որ ավստրիացիները մնացին իրենց հողում, մինչդեռ պաղեստինցիներին մնում է թափվել ծով կամ գետ, առանց ունենալու ապաստան տվող որեւէ երկիր, ներառյալ հարեւան Եգիպտոսը, որը պաշտոնապես հայտարարում է, որ, իբր, պաղեստինցիներին ապաստան տալը նշանակում է Արաբական դատի վախճանը:

Պաղեստինցիների մյուս այլընտրանքը, ինչպես ասվեց, խցկվելն է Գազայում եւ հարակից տարածքներում կառուցվող համակենտրոնացման կայաններ, որտեղ նրանց սպասում է այն ամենը, ինչը վիճակվել էր 6 միլիոնից կրճատված հրեա վերապրողներին:

Տասնամյակներ շարունակ հրեաները աշխարհով մեկ գոռում են՝ Never again, «Այլեւս երբեք»: Ու մենք, ի տարբերություն հրեաների, ցեղասպանության հետեւանքով հայրենիք, հող, ունեցվածք կորցրած հայերս, ոգեւորությամբ կրկնում ենք նրանց հետ՝ Never again: Սակայն տեսանք, որ նույն հրեաները, հանձին իրենց կառավարության, նորից again արեցին, այս անգամ Արցախի եւ արցախահայության դեմ՝ business is business եբրայական ձեւով, եւ թույլ ենք տալիս, որ նեթանյահուները Էրդողանի հետ իրենց գզվռտոցներում որպես մանրադրամ օգտագործեն Հայոց ցեղասպանությունը, մեր Հոլոքոսթը:

Երբեւիցե կունենա՞նք զարգացած, հայրենասեր, պատասխանատու, ցեղապաշտպան ղեկավարություն, որը տեր կլինի սեփական ժողովրդի իրավունքներին, տեր կկանգնի սեփական հողին, սահմաններին ու ժողովրդի շահերին, առանց ոտնահարելու հնամենի հարեւան ժողովուրդների ու բարեկամ երկրների շահերը:

***

Երեքշաբթի օրը, ըստ BBC-ի, Իսրայելը զինվորական իշխանությանը կոչ արեց Գազայի բնակիչներին անհապաղ լքել քաղաքը՝ ցամաքային լայնածավալ հարձակումից առաջ, իսկ Նեթանյահուն հայտարարեց, որ մինչեւ հիմա եղած հարվածները ոչինչ են պատահելիքի համեմատությամբ:

Բայց ո՞ւր են փախչելու վերապրողները:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Օգնում են ոչ թե պարտադրված, այլ սրտանց. HUJ-ի կամավորներին սպասում են միշտ

**Եվս մեկ անգամ համոզվում ենք, որ մշակույթը սահմաններ չունի, երբ լեհը սիրով ու պատրաստակամությամբ հայկական տոլմա է փաթաթում, իտալացին՝ հայերենով հաշվում, իսպանացին՝ հայերեն է երգում: Սա մշակույթների բախում չէ, այլ նրանց համատեղ եւ ներդաշնակ, բայց բազմալեզու ու բազմագույն յուրօրինակ սիմֆոնիան է, որը կատարվում է ոչ թե էկզոտիկ մի վիլլայում կամ ֆանտաստիկ ֆիլմում, այլ հենց այստեղ՝ Հայաստանում, Ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ - կամավորական աշխատանքների ծառայության (HUJ) միջազգային կամավորական աշխատանքի ճամբարներում:**

Այստեղ հնարավորն ու անհնարը, պարզապես, այլ կերպ են սահմանվում: Տասնյակ երկրներից ժամանած կամավորները՝ հայ կամավորների հետ միասին աշխատում են՝ բարեկարգում, մաքրում, երեխաների օրը դարձնում գունեղ, զարմանում ու սովորում միմյանցից՝ բացելով մշակութային աշխարհներ միմյանց առաջ: HUJ-ի ճամբարներն այս ամառ էլ լի էին օտարերկրացի երիտասարդներով ու նոր պատմություններով: Մենք որոշեցինք այդ պատմությունները վավերագրել հենց տեղում՝ այցելելով ճամբարներից յուրաքանչյուրը:

«ՄԵԾ ՈԳԵՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՇԱՏ ՍԻՐԵԼԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ»

Մեր այցի առաջին կանգառը Երեւանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցն էր, որտեղ HUJ-ի կամավորներն արդեն 10 տարուց ավելի է, ինչ ամառնային շրջանում հյուրընկալվում եւ կամավորական աշխատանքներ են իրականացնում:

Դպրոցի տնօրենի պաշտոնակատար **Սոնա Դավթյանը** ջերմությամբ է պատմում կամավորների աշխատանքի մասին. «**Դպրոցում ավանդույթ է դարձել ամեն տարի կամավորներին հյուրընկալելը, ինչը ողջունվում է ոչ միայն աշակերտների, տնօրենության, այլ նաեւ ծնողական համայնքի կողմից: Մեծ ոգեւորվածությամբ համագործակցում ենք մեր շատ սիրելի կամավորների հետ: Անչափ կարեւոր է նրանց ցանկացած աշխատանք, որը կօժանդակի չտեսնող երեխաների առօրյայի կազմակերպմանը եւ բարելավմանը**»:

Այս տարի դպրոցի տարածքում իրականացվել են ինչպես ներքին վերանորոգման, այնպես էլ արտաքին բարեկարգման աշխատանքներ: Օրինակ՝ դպրոցի բակում գտնվող մինի քաղաքը, որը ծառայում է որպես տարածական կողմնորոշման եւ տեղաշարժի ուսուցման տարածք, վերանորոգվել ու թարմացվել է: Ներկվել են վերգետնյա անցումները, նստարաններն ու ճանապարհային նշանները: «**Միշտ ուրախ ենք եւ բաց ենք համագործակցության համար եւ սպասում ենք բոլորին, ովքեր կունենան նման հետաքրքրական, լավ առաջարկներ, որոնք կնպաստեն տեսողության խանգարում ունեցող երեխաների կրթությանն ու դաստիարակությանը», -** ընդգծում է տիկին Դավթյանը:

Դպրոցի ճամբարի պատասխանատու **Սուրեն Խաչատրյանի** համար այս ամառը յուրահատուկ էր: Նախորդ տարի նա նույն դպրոցում շարքային կամավոր էր, իսկ այս տարի արդեն՝ ճամբարի ղեկավար: Արդեն 6-րդ նման միջազգային ծրագիրն է, որին մասնակցում է:

**«Մասնակիցների կազմը հիանալի է. ունենք կամավորներ Իսպանիայից, Լեհաստանից, Ֆրանսիայից ու Իտալիայից: Բոլորն էլ շատ աշխատասեր են: Միասին դասասենյակներ ենք վերանորոգում, ներկման աշխատանքներ կատարում դպրոցի բակում: Կամավորական աշխատանքը շատ ավելին է, քան պարզապես գործ: Դա նաեւ շփում է, հարաբերություն, կապ, մշակութային բացահայտում», -** ասում է Սուրենը, որը ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող է:

Հայաստանցի կամավոր **Անի Ծատրյանն** էլ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի ուսանողուհի է: «**Սա իմ առաջին միջազգային ճամբարն է, բայց արդեն ինձ զգում եմ այս միջավայրի մի մասը: Աշխատանքներն այնքան ոգեշնչող են, որ դժվար է տարբերել աշխատանքը ժամանցից: Ծանոթանում ենք միմյանց ազգային խոհանոցների հետ, ճանաչողական էքսկուրսիաներ ունենում», -** պատմում է նա:

Հատկանշական է այն, որ կամավորները ծանոթանում են նաեւ դպրոցի յուրահատկություններին, մասնավորապես՝ բրայլյան համակարգին:



HUJ Մանկական վերականգնողական կենտրոն

Դպրոցի շրջանավարտները ցուցադրել են, թե ինչպես են կարդում ու գրում այդ համակարգով, ինչն օտարերկրացիների համար դարձել է յուրահատուկ եւ զգայուն փորձառություն:

Իսպանիայից ժամանած **Ժուան Գրասիա Ֆերնանդեսը,** որն ապագա համակարգչային ինժիներ է եւ այժմ իր երկրում սովորում է բակալավրիատում, ասում է, թե Հայաստանը կամավորության համար ընտրել է մի քանի պատճառներով. «**Ուզում էի գալ մի երկիր, որի մասին շատ բան չգիտեի: Ասեմ անկեղծ՝ հիացած եմ թե՛ մարդկանցով, թե՛ ճաշակով, թե՛ պատմությամբ: Իսկ աշխատանքն այնքան բովանդակալից է, որ իրականում մոռանում ես, որ սա կամավորություն է**»:

Ժուանի հետ համակարծիք է Ֆրանսիայից ժամանած **Ռոմանե Լֆեվրը:** Նա միջազգային ու եվրոպական հարաբերությունների ապագա մասնագետ է, առաջին իսկ օրերից իրեն «հայրենակից» է զգում Հայաստանում: «**Հայերն անչափ շփվող են: Նույնիսկ նրանք, ովքեր անգլերեն չգիտեն, մեծ ջանասիրությամբ փորձում են շփվել՝ ժեստերով, հայացքով: Իսկ այն հանգամանքը, որ այստեղ մարդիկ մեքենայում ամրագոտի չեն կապում, ինձ մի փոքր զարմացրեց: Մեր երկրում անհնարին է, որ պատահի նման բան**», - ծիծաղելով պատմում է նա:

Հայաստանում անցկացրած օրերից նա հատկապես առանձնացրեց այցելությունը Հայոց ցեղասպանության հուշահամալիր, որը, ըստ նրա, «**հուզիչ եւ ուսուցանող էր**». «**Հայաստանում ամեն ինչ շատ հավանել եմ, հատկապես եկեղեցիները, որովհետեւ շատ են տարբերվում եվրոպական կաթոլիկ մշակույթի եկեղեցիներից: Իսկ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում բավականին նոր տեղեկատվություն ստացա, որը շատ գնահատում եմ**»:

Լեհաստանից ժամանած ապագա բիոտեխնոլոգ **Ագնեշկա Բեշկան** էլ, որը սովորում է Ավստրիայում, նոր փորձառություն է կուտակել իր համար Հայաստանում՝ թե՛ վերանորոգման աշխատանքների գործում, թե՛ հայկական մշակույթի հետ առերեսվելով: «**Մենք միասին պատրաստեցինք տոլմա: Ինձ թվում է՝ գրեթե պրոֆեսիոնալի պես էր ստացվել: Տոլման դարձել է իմ սիրելի ուտեստը**»:

Ի դեպ, կամավորները մասնակցում են նաեւ հայոց լեզվի դասերի եւ չզլացան մեզ հետ զրույցի ընթացքում էլ ի ցույց դնել իրենց հայերենի իմացությունը՝ «**բարի գիշեր**», «**շնորհակալություն**»:

Կամավորների խմբի շրջանակներում կազմակերպվել են նաեւ մշակութային օրեր՝ ազգային խոհանոցների ցուցադրությամբ, պարերի ուսուցմամբ եւ էքսկուրսիաներով: Լեհ կամավոր Ագնեշկան պատմում է. «**Մենք մասնակցել ենք պարի դասի, որտեղ սովորել ենք հայկական ժողովրդական պարերի շարժումներ: Միասին պարել ենք «Մենք ենք, մեր սարերը» երաժշտության տակ**»:

## ԵՐԲ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՐՏԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ ՆՈՒՅՆ ԼԵԶՎՈՎ

Օգոստոսը մանկական ուրախ ձայների, արտասանվող «շնորհակալ եմ»-ների ու ջերմ գրկախառնությունների ամիս է «Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոնում»: Այստեղ, տարիների ավանդույթի համաձայն, կրկին հյուրընկալվել են միջազգային կամավորներ՝ Իտալիայից, Սերբիայից, Ռուսաստանից, Մեքսիկայից ու Հայաստանի տարբեր համայնքներից:

«Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոնի» կամավորական ծրագրերի պատասխանատու **Քրիստինե Մանուկյանը** նշում է, որ արդեն 25 տարի է համագործակցում են HUJ-ի հետ. «**Կենտրոնում աշխատում եմ արդեն 6-րդ տարին: Ամեն օգոստոս սպասում ենք մեր եվրոպացի եւ հայ կամավորներին: Նրանք ծանոթանում են ոչ միայն մեր մշակույթին, այլեւ աշխատում են հաշմանդամություն ունեցող մեր ձագուկների հետ: Երեխաները իրենց շատ են սիրում: Ու գիտե՞ք, նույնիսկ մայրիկներն են ասում՝ կուրսի օրերը այնպես ենք պլանավորում, որ օգոստոսին գանք կենտրոն եւ կամավորներ էլ լինեն**»:

Մանուկյանի խոսքով՝ կամավորներն ապահովում են երեխաների ժամանցային հատվածը, ինչը կարեւոր հոգեբանական աջակցություն է՝ ծանր եւ երբեմն ցավոտ բուժման ընթացքից հետո:

«**Մեր հոգսը կամավորները չեն կարող թեթեւացնել, բայց երեխաների ժպիտը, երբ ներս են մտնում կամավորները, աշխարհի ամենամեծ նվերն է մեր կոլեկտիվի համար**», - ավելացնում է նա:

Ճամբարի ղեկավար **Էլինա Գրիգորյանը,** որը նախորդ տարի կամավոր էր Երեւանի Նիկողայոս Տիգրանյանի անվան Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար 14 հատուկ դպրոցում, ասում է, որ իրենք ոչ միայն ժամանակ են անցկացրել երեխաների հետ, այլեւ զբաղվել են բարեկարգման աշխատանքներով վերականգնողական կենտրոնի տարածքում: Ինչպես նաեւ գեղեցիկ միջոցառում պարգեւել երեխաներին:

«**Մենք առաջին իսկ օրից պատրաստվում էինք «Կարմիր գլխարկ» հեքիաթի հիման վրա բեմադրված ներկայացմանը: Ընդ որում՝ հեքիաթն այս անգամ նոր սցենար ուներ՝ Կարմիր գլխարկը ճանապարհին անցնում էր տարբեր երկրներով, եւ յուրաքանչյուր երկիր ներկայացվում էր իր ազգային երգով ու պարով: Երեխաները ակտիվ ներգրավված էին՝ պարում էին, խաղում էին, դերեր ստանձնում: Բոլորս շատ հուզված էինք ավարտին», -** ասում է Էլինան:

Ի դեպ, Էլինան Արցախից է, սովորում է բժշկական համալսարանում եւ իր համար այս ճամբարը նաեւ մասնագիտական դրսեւորման եզակի հնարավորություն էր. «**Ես ընտրել եմ հենց այս ճամբարը, որովհետեւ որպես ապագա բժիշկ՝ վերականգնողական ոլորտն ինձ շատ մոտ է: Սա արդեն իմ կյանքի երկրորդ լավագույն ճամբարն էր**»:

26-ամյա **Դանիելե Ֆերրարին** Իտալիայից է: Հայաստանում անցկացրած օրերն իր համար պարզապես ճամբար չէին:

«**Ես սիրահարվեցի Հայաստանին: Երեխաների ժպիտները, մարդկանց ջերմությունը՝ չեմ մոռանա երբեք: Այստեղ իմաստալից ընկերություն եմ ձեռք բերել**», - ասում է Դանիելեն:

Նրան հատկապես հուզել է Արցախին նվիրված օրը. «**Ես լսեցի Արցախի պատմությունը: Ցավ եմ ապրում, որ Արեւմուտքը մոռացել է այդ ցավի մասին: Կփորձեմ անել ամեն ինչ, որ Եվրոպայում ավելի շատ խոսվի դրա մասին**»:

Հայաստանից, իհարկե, դատարկաձեռն չի հեռանում: Գրպանում՝ Արցախի գորգով հուշանվեր է, սրտում՝ հայերեն սիրված ասացվածքը՝ «Էշ մի սատկի, գարուն կգա»:

*Շարունակելի*

ՀՐԱՆՏ ՍԱՐԱՖՅԱՆ

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

# Ադրբեջանում Ռուսաստանին արդեն թշնամի՞ են համարում

Թե ռուսաստանյան պաշտոնական շրջանակներն ի վերջո ինչ դիրքորոշում կորդեգրեն Ադրբեջանի հետ վերջին շրջանում ստեղծված ոչ այնքան հարթ հարաբերությունների հետ կապված, ժամանակը ցույց կտա: Գոնե «անզեն աչքով» ակնհայտ է թվում, որ պաշտոնական Մոսկվան համենայն դեպս կշարունակի առաջնորդվել պահի տնտեսական շահերով, որոնց տեսակետից այդ երկիրն իրենց համար մնում է հարկավոր գործընկեր... Իսկ Ադրբեջանի հետագա դիրքորոշումը, արտաքին ազդեցության չափից բացի, նաեւ կախված կլինի այն բանից, թե Բաքուն էլի ի՞նչ ունի կամ չունի ստանալու Մոսկվայից կամ նրա օգնությամբ:



Իսկ ահա երկու երկրների, եւ մանավանդ՝ Թուրքիայի անմիջական ազդեցության ոլորտում գտնվող ադրբեջանական հասարակությունը բնականաբար ավելի անկեղծ ու բուռն է իր տրամադրություններում ու արձագանքներում այս դեպքում եւս: Օրերս լրատվամիջոցները տեղեկացրին ադրբեջանական «Մինվալ» կայքի հարցման արդյունքների մասին, ըստ որոնց՝ այդ երկրի հարցված քաղաքացիների 63%-ն Ադրբեջանի գլխավոր թշնամի է համարել Ռուսաստանը: Երկրորդ տեղում է Հայաստանը՝ 60%, եւ երրորդը՝ 53%-ով՝ Իրանը: Որպես իրենց դաշնակցի՝ հարցված ադրբեջանցիների 88%-ը նշել են Թուրքիան, 62%-ը՝ Պակիստանը եւ 48%-ը՝ Իսրայելը:

Հայտնի են նաեւ հենց **Իլհամ Ալիեւի** արած որոշ հակառուսական հայտարարությունները, իրենց կործանված ինքնաթիռի հետ կապված հարցով ՌԴ-ի դեմ միջազգային հայց ներկայացնելու սպառնալիքը: Իսկ ադրբեջանցի քաղաքական գործիչներից պատգամավոր **Ռասիմ Մուսաբեկովն**, օրինակ, ռուսական «Ցարգրադ» հեռուստաալիքի կայքի վկայությամբ, այս տերության նկատմամբ թշնամանքում ընդհուպ կորցնելով նաեւ իրականության զգացումը, բացահայտ հայտարարել է, թե Ադրբեջանի բանակն ընդունակ է Կովկասում «լուրջ պարտության մատնելու» Ռուսաստանին: Ըստ կայքի, անդրկովկասյան այս հանրապետությունում ակտիվորեն քննարկվում են իրենց քաղաքական դեմքերի՝ Ռուսաստանին մարտի դաշտում հնարավոր հաղթելու մասին այսպիսի հայտարարությունները:

Մի՞թե Բաքուն իրոք երազում է հաղթել Մոսկվային եւ արժե՞, որ այդաստիճան ինքնավստահ լինի, հռետորական հարց է տալիս լրատվամիջոցը: Իսրայելցի հայտնի գործիչ, ռազմաքաղաքական փորձագետ **Յակով Կեդմին**, մեկնաբանելով ադրբեջանցիների՝ նման բարձրագոչ հայտարարությունները, նշել է, որ դրանք որեւէ իրական հիմք չունեն: «Ադրբեջանում նկատվում է մի տեսակ «խանգարվածություն», երբ ոմանք սկսում են իրենց մեծություն համարել»: Քաղաքագետի խոսքով, Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** գործողությունները, որն, ըստ ադրբեջանցիների, դավաճանել է իր երկրին եւ առանց պայքարի հանձնել Լեռնային Ղարաբաղը, նրանց կողմից մեկնաբանվում են որպես հաջողություն: Եվ սա հանգեցրել է այն պատրանքին, թե Ադրբեջանը լուրջ ռազմական ուժ է դարձել Կովկասում, ու հիմա խեթ են նայում ոչ միայն Հայաստանին, այլեւ Ռուսաստանին:

Կեդմին կասկած է հայտնել Ադրբեջանի պատմական նշանակության վերաբերյալ՝ նրա ռազմական նվաճումների առումով: Նշել է, թե երկիրը չունի մարտերի եւ հաղթանակների հերոսական պատմություն ու ավանդույթներ, հիշեցրել է, որ խորհրդային շրջանում մարշալների թվում շատ են եղել հայեր, բայց չի եղել ոչ մի ադրբեջանցի մարշալ ու զորավար:

«Երբ Հայաստանը Ադրբեջանի հետ կռվել է, հաղթել է: Իսկ ահա երբ Հայաստանը հանձնվեց, այդ ժամանակ Ադրբեջանը «հաղթեց»,- ասել է Յակով Կեդմին:

Ըստ «ՌուՆյուզ24» լրատվականում քաղաքագետի մեկ այլ մեկնաբանության, Ալիեւին անհրաժեշտ է իր անմիջական «նոր տերերին» հասկանալ տալ, որ այժմ ինքը նրանց՝ ակտիվ ռուսատյացների թիմի անդամ է: Միայն Ուկրաինային օգնելը, հավանաբար, բավարար չէ, ուստի անհրաժեշտ է ցույց տալ Ռուսաստանի նկատմամբ որոշակի ոչ բարեկամական գործողություններ:

Ադրբեջանի առաջնորդն, ըստ այդմ, միտումնավոր հակառուսական դիրքորոշում է ընդունել՝ հույս ունենալով ստանալ Արեւմուտքի աջակցությունը, որը նախկինում սահմանափակ էր՝ մարդու իրավունքների խախտումների մեղադրանքների պատճառով: Մոսկվայի եւ Բաքվի միջեւ տեղի ունեցողը, ինչպես նշվում է, Ալիեւի անձնական քմահաճույքը չէ, այլ նպատակաուղղված քաղաքականություն:

Ինչպես ընդգծել է անվանի փորձագետը, Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերություններում ճգնաժամը ձեռնտու է որոշ արեւմտյան երկրների համար, որոնք ձգտում են աշխարհաքաղաքական օգուտներ քաղել դրանից: Նման բան մինչ այս նկատվել է նաեւ՝ կապված Հայաստանի, Ուկրաինայի ու Վրաստանի հետ, նկատել է Յա. Կեդմին:

# Իմաստաբանական բառարան

## *Փետրավորներն ու մենք*

Հազարամյակների ընթացքում մարդը կարողացել է թռչունների մոտ հայտնաբերել իրեն բնորոշ բնավորության գծեր եւ իր նմանին համեմատել ձվադրման հատկությամբ օժտված որոշ փետրավոր կենդանիների հետ:

***Թութակը***, օրինակ, կարողանում է խոսել ու կրկնել մարդկանց ասածները, որից ելնելով էլ շեֆին ծնող ու նրա թեզերը հնարավոր բոլոր առիթներով կրկնող մարդուն հաճախ թութակի հետ են համեմատում:

***Ծիծեռնակը*** չվելու հատկություն ունի ու բնօրրան է վերադառնում իր կարիերայի համար քաղաքական ամենանպաստավոր եղանակներին եւ հարկ եղած ժամանակ լքում է բնօրրանը, կամ, ինչպես քաղաքագիտության մեջ է ընդունված ասել՝ փոխում է ճամբարը:

***Ագռավի*** կռռալու հատկությունն է մարդկանց ուշադրությունը գրավել: Այդ պատճառով էլ ուրիշի լավը չցանկացող, ձեռնարկվող բարեփոխումները չնկատող ու փնթփնթացող հոռետես մարդկանց կռռացող ագռավին են նմանեցնում:

***Աղավնին*** օգտագործվում է աշխարհաքաղաքական ամենաբարդ իրավիճակներում խաղաղասիրական դերը բարձրացնող, ինչպես նաեւ խաղաղության Նոբելյան մրցանակին հավակնող մարդուն նկարագրելու համար: Կարեւոր չէ, թե իր երկրի պաշտպանական գերատեսչությունը դարձնում է «պատերազմի նախարարություն» եւ իրերը կոչում իրենց անուններով:

***Արծվի*** խրոխտ կեցվածքը համեմատելի է անվեհեր ու հանդուգն քաղաքական այրերի վարքագծի հետ, որոնք մշտապես ճիշտ ժամանակին, ճիշտ վայրում անվրեպ խաղադրույք են կատարում:

***Հավն*** իր խելքով ու անհեռատեսությամբ օրինակ է ծառայում սակավամիտ եւ շատ արագ քարոզչությունից ազդվող մարդկանց համար եւ օգտագործվում է որպես խելքի չափման միավոր:

***Աքաղաղը***՝ հավի արական տեսակը, ինքնավստահության ու գոռոզամտության խորհրդանիշ է, որի կերպարը երբեմն օգտագործվում է տարբեր ամբիոններից հոխորտացող մարդկանց բնորոշելու եւ նրանց «խորոզանալու» հատկությունը պատկերավոր գույներով նկարագրելու համար:

***Բուն*** իմաստության ու խորաթափանցության խորհրդանիշ է՝ հին հույն աստվածուհի Աթենայի խորհրդապատկերը: Սակայն բվի թուրքերեն տարբերակը հայերենում հակառակ երանգավորում ունի:

***Բայղուշը*** բվի թուրքական տարբերակն է՝ չարագուշակության խորհրդանիշը: Այդ պատճառով էլ բայղուշ են անվանում բոլոր այն չարագուշակ քաղաքական մեկնաբաններին, որոնք խաղաղության համար ձեռնարկվող քայլերը լուրջ չեն ընդունում: Բայղուշները, առանց հիմնավոր փաստեր ներկայացնելու կարծում են, որ պատերազմի վտանգի վերացման եւ պաշտպանական ծախսերի կրճատման մասին հայկական կողմի համոզվածությունը չափազանցված է, իսկ ամեն պահի պատերազմին ընդառաջ գնալու Բաքվի բռնապետի հոխորտանքները՝ հիմնավոր:

Թուլանալ է պետք. Բայղուշների չարագուշակություններից վախիլ մի՛ք:

**Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# Սլովեն նկարչի ցուցահանդեսը Թալինում

Սեպտեմբերի 8-ին Թալինում կայացավ միջազգային ճանաչմամբ սլովեն նկարիչ **Մարկո Յակշեի** «Առաջին անգամ այստեղ» ցուցահանդեսը: Այն ներկայացնում է նկարչի յուղաներկով աշխատանքները՝ ստեղծված նրա առաջին արվեստի կացարանում՝ Թալինում: Առաջին անգամ հայտնվելով հայկական բնաշխարհում ու գյուղական վայրում՝ Յակշեն իր տպավորություններն ու զգացողությունները փոխանցել է կտավին՝ համադրելով դիտողականությունը եւ մեղմ երեւակայական շեշտադրումը: Նրա աշխատանքներում բնության, բույսերի, լույսի եւ հողի տեքստուրաները վերածվում են մտահուզող ու խորհրդանշական պատկերների, որոնք դիտողին ներկայացնում են ծանոթ միջավայրը նոր հայացքով ու փոքր-ինչ ֆանտաստիկ շեշտադրումներով:

Մարկո Յակշեն (ծն. 1959, Լյուբլյանա, Սլովենիա) 1987 թ. ավարտել է Լյուբլյանայի Գեղարվեստի Ակադեմիան եւ 1993-ից ապրում եւ ստեղծագործում է որպես ազատ վարպետ Սլովենիայի գյուղական միջավայրում: Նա հայտնի է իր յուրահատուկ նկարչական լեզվով՝ համադրելով պատկերային պատումը, արտահայտիչ գույները եւ հորինվածքը, ուսումնասիրելով իրականության եւ երեւակայության հավասարակշռումը: Բնությունը, բույսերը, կենդանիները եւ մշակույթը




հաճախ հանդիսանում են նրա աշխատանքների ներշնչման աղբյուր: Յակշեն մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, այդ թվում՝ Վենետիկի 59-րդ Բիենալեին (2022) Սլովենիայի տաղավարում: Հայաստանում իր առաջին այցի ընթացքում նա սերտորեն աշխատել է տեղական համայնքի եւ բնության հետ՝ ստեղծելով կտավներ, որոնք միավորում են հիշողությունը, մարդուն եւ բնությունը՝ ինտիմ, երեւակայական եւ տեղայնորեն հիմնավորված տեսլականով:

Արվեստի կացարանը OASis ծրագրի մասն է, որը Եվրոպայում ստեղծագործական տարածքների ցանց է ու նպատակ ունի արվեստը հասանելի դարձնել լայն հասարակությանը: Այն միավորում է 13 արվեստավայր 10 երկրներում (Հայաստան, Բելգիա, Ֆրանսիա, Վրաստան, Հունգարիա, Իտալիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիա եւ Սլովենիա) եւ համաֆինանսավորվում է Եվրամիության Creative Europe ծրագրի կողմից:

**ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

# Կառուցել ու նորոգել 300 դպրոց՝ 220-ից ավելի գյուղերի դպրոցները փակելո՞վ

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**



Հանրակրթության նոր ուսումնական տարին Շիրակի մարզը դիմավորեց, մարզպետի աշխատակազմի ձեւակերպմամբ, դպրոցաշինական լայնածավալ աշխատանքներով: Ըստ հրապարակված տեղեկատվության, ուստարվա շեմին վերանորոգման աշխատանքներ էին իրականացվում մարզի 27 դպրոցներում, որոնցից 15-ը՝ Գյումրիում: Քաղաքում մինչեւ սեպտեմբերի 1-ն ավարտվել են դրանցից 3-ի աշխատանքները, 6 դպրոցներում նորոգումն ամբողջապես չի ավարտվել, սակայն դասերը կազմակերպվում են ավարտված մասնաշենքերում, մնացած 6-ում էլ դրանք կանցկացվեն այլ՝ «հյուրընկալ» դպրոցներում... Գյուղական բնակավայրերում նախատեսվում էր վերանորոգման աշխատանքներն ավարտել երկու գյուղերի դպրոցներում, իսկ մյուս գյուղերի դասերն անցկացնել տվյալ բնակավայրերի համար վարչական եւ այլ շենքերում:

Առանց մանրամասների նկատենք, որ այս երեւի աննախադեպ իրավիճակը, երբ սեպտեմբերի 1-ին դպրոցի շենքը պատրաստ չէ ընդունելու աշակերտներին, բազմաթիվ անհարմարություններ է ստեղծում մանավանդ հյուրընկալվող դպրոցների սաների, ուսուցիչների եւ ծնողների համար, ինչը բոլոր դեպքերում չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ նաեւ ուսումնական գործընթացի վրա: Չարժե՞ր արդյոք միանգամից այսքան ծավալ ցուցադրելու ձգտման եւ ի հետեւանս՝ նման ընդհանուր շփոթ ստեղծելու փոխարեն այս անգամ կազմակերպչական եւ շինարարական ուժերը կենտրոնացնել այնքան շենքերի վրա, որքանի նորոգումը, գուցե եզակի բացառություններով, հնարավոր կլիներ նորմալ ավարտել մինչեւ սեպտեմբերի 1-ը, ինչպես ընդունված կարգն է:

Բայց սա այսպես թե այնպես գոնե ժամանակավոր է: Պետական քարոզչությունն ակտիվորեն թմբկահարում է կառավարության մինչեւ 2026 թվականը 300 դպրոցի ու 500 մանկապարտեզի նորոգման, վերակառուցման եւ կառուցման իրականացվող ծրագիրը, ու գուցե կարելի էր այդ քանակի համար նաեւ ծափահարել (դպրոց կառուցելուց լավ բա՞ն): Բայց դրա դիմաց նախատեսվել է հանրապետության 231 դպրոցների, այդ թվում՝ 224 գյուղերի՛ դպրոցների փակում... Ու ամեն 2-3, գուցե նաեւ ավելի թվով այդ գյուղերի աշակերտները պետք է ամբողջ տարին ամեն օր ճանապարհ անցնեն, գնան հասնեն կառուցվող մեկ այլ գյուղի դպրոցը եւ վերադառնան: Ու քանակական առումով այստեղ տխուր առաջնությունը տրվել է Շիրակի ու Լոռու մարզերին: Շիրակում հիմքից կառուցվող 12 դպրոցի ու կրթահամալիրի դիմաց փակվելու է ամենից շատ՝ 47 գյուղերի եւ 1 քաղաքային (Գյումրու) դպրոց: 48-ն էլ, այդ թվում 45-ը՝ գյուղական, փակվելու է Լոռիում:

ՀՀ տարբեր շրջանի կառավարողները նման հարցերում կարծես թե հավասարապես շատ են «սիրում» Շիրակն ու Գյումրին: 2003-2004 թվականներին դպրոցների սկսված քոչարյանական առաջին՝ բուռն «օպտիմալացման» ժամանակ հանրապետությունում միավորված 35 դպրոցներից 17-ը Շիրակում էր: Որից Գյումրիում, որտեղ ավերիչ երկրաշարժից ու ԽՍՀՄ փլուզումից հետո գոնե մեկ գործարան այդպես էլ չվերականգնվեց, պակասեց մեկ տասնյակ դպրոց: Իսկ նաեւ այսպես կոչված ներդպրոցական օպտիմալացման, այսինքն դասարանների միացման միջոցով մարզի դպրոցներում պակասեց 182 դասարան, նյութական ծանրագույն իրավիճակում հայտնված մարզում այս ամենի հետեւանքով միայն առաջին ուսումնական տարում աշխատանքից ազատվեց... հա-զա՛ր մանկավարժ...

Հանրապետությունում փակվող, ինչպես տեսանք, հիմնականում գյուղական դպրոցների ցանկը հաստատելու մասին ԿԳՄՍ նախարարի 2023 թ. սեպտեմբերի 11-ի 1790-Ա/2 հրամանում դա չի կոչվում փակում, այլ՝ «կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ծրագրում ներառում»: Սրա մեջ տեսականորեն գուցե կա եւ ճշմարտության մասնիկ, բայց մտահոգիչն ակներեւաբար շատ ավելին է:

Գիտենք, մի քանի հայ որտեղ եղել են՝ մի դպրոց են բացել, մի թերթ հիմնել ու մի եկեղեցի են կառուցել: Որովհետեւ դրանք ազգային զարգացման կարեւոր կռվաններ են: Հիմա Հայաստանում հայի կառավարությունը այդքան բնակավայրերի դպրոց է փակում, թերթեր է փակում ու Հայ եկեղեցու դեմ արշավ կազմակերպում: Սա՝ իմիջիայլոց ասած: Իսկ ըստ էության՝ ինչ էլ որ ասվի, գյուղում դպրոց փակելը, այն էլ այդքան շատ, գյուղերի դատարկման մի էական գործոն է: Ի դեպ՝ մասնավորապես սահմանային գյուղերի... Պետք է պատկերացնել թեկուզ երթեւեկության ենթադրելի խնդիրները եւս, երբ օրինակ Աշոցքի գոտու տեւական խստաշունչ ձմռան ու բուքերի պատճառով առանց այն էլ վատ միջգյուղային ճանապարհներ են օրերով ու շաբաթով փակվում:

Այդքան շատ բնակավայրերում քիչ թվով աշակերտների խնդիրը ժողովրդագրական խնդիր է, որն ի վերջո պահանջում է ոչ թե աչքից էլ, աչքացավից էլ ազատում, այլ ա՛յդ խնդրի լուծման տեւական, խելամիտ պետական քաղաքականություն՝ որպես ռազմավարական անհրաժեշտություն ու պահանջ: Էլ չենք ասում՝ ինչքան մանկավարժներ ու աշխատակազմեր են այս որդեգրված մոտեցմամբ գործազրկվում:

Եվ ի՞նչ է ստացվում: Նախորդ իշխանության սկսած ու այսօրվա կառավարողների շարունակած՝ համայնքների համատարած հախուռն «խոշորացման» ճանապարհով տեղական ինքնակառավարումը հեռացվեց տեղերից, հիմա էլ դպրոցներն են հեռացվում աշակերտներից: Գոնե տարրական դասարանների այն 6-7 տարեկան մանուկների համար իրենց տներին մոտ դպրոցները, դասարանները չեն պահպանվում:

Մանրուք չի թվում նաեւ, թե մեր պայմաններում շենքային ու մարդկային փունջ-փունջ այսքան կենտրոնացումները, ինչպես եւ ամենօրյա այսքան տեղաշարժերն ու երթեւեկը տարբեր անվտանգային առումներով որքան են ընդունելի:

Սա ուղի՞ղ ճանապարհ է:

## Նոր հրատարակություն




Օրերս «Անտարես» հրատարակչատանը դոկտ **Վաչե Գաբրիելյանի** առաջաբանով լույս է տեսել իրավաբան, բիզնեսի եւ ֆինանսների գծով օրենսգետ, Երեւանի Ամերիկյան ու ֆրանսիական համալսարանների դասախոս **Վարուժան Ավետիքյանի** մենագրությունը անգլերեն լեզվով՝ «The Law of Business» («Բիզնեսի օրենքը») խորագրով, 176+ էջ ծավալով, լաթակազմ, պատշաճ ձեւավորմամբ ու ներկայացմամբ:

Գիրքը նախատեսված է ֆինանսագետների, բիզնես հասարակության, դասախոսների եւ ուսանողների համար:

# 70-ամյակ



Լրացավ «**Ազգ**»-ի նախկին աշխատակից, գեղագետ եւ արվեստաբան-գծանկարիչ **Լեւոն Լաճիկյանի** 70 տարին: Անցյալ դարի 90-ականների սկզբի ցուրտ ու անլույս տարիների մշակութային տարեգիրը դարձավ նա՝ օր օրի մեր թերթում լույս ընծայելով ժամանակի մշակութային կյանքին վերաբերող իր մեկը մյուսից հետաքրքրական հոդվածները: Այն հեռավոր օրերի տեղեկատվական սղության ու անհասանելիության պայմաններում Լեւոնը ժրաջան մեղվի նման ոչ միայն պտղունց-պտղունց հավաքում ու ընթերցողին էր ներկայացնում մեր նվաղկոտ գեղարվեստական կյանքի նորությունները, այլեւ հանդես էր գալիս արվեստագիտական լուրջ հոդվածներով: Հենց նրա շնորհիվ գերազանցապես ազգային-քաղաքական թեքվածության մեր թերթը շուտով ամենօրյա մեկ լրիվ էջ նվիրեց մշակույթին:

Լեւոնի այդ հոդվածների ընտրանին հրատարակվեց 2004-ին լույս տեսած «Անլույս օրերի ոգեղեն ողողանջներ» ծավալուն գրքում: Վերջինս բացի այդ օրերի մեր մշակութային կյանքի հավաստի վավերագրությունը լինելուց, արժեքավոր է նաեւ մշակութաբանական նոր հավատամքի ձեւավորման տեսակետից:

Հաջորդող տարիներին Լեւոն Լաճիկյանը հեղինակեց նաեւ մի շարք այլ գրքեր, գիտական հոդվածներով հանդես եկավ հայագիտական նշանավոր հանդեսներում ու հանրագիտարաններում, իսկ վերջին 2 տասնամյակներին տպավորիչ գործունեություն ծավալեց հատկապես գծանկարչության բնագավառում՝ հարստացնելով արդի հայ գրաֆիկան քաղաքային գողտրիկ տեսարաններով ու հայ պաշտամունքային կառույցների ուշագրավ մեկնաբանություններով:

Բարեբախտաբար, Լեւոն Լաճիկյանը դեռ պատնեշի վրա է եւ Երեւանի պետական համալսարանում մանկավարժական գործունեությանը զուգահեռ շարունակում է փնտրել ու գտնել իրացման նոր ոլորտներ՝ ի շահ նորահաս սերնդի կրթության ու դաստիարակության:

Սիրով շնորհավորում ենք մեր լավ բարեկամին ու 70-ամյա երիտասարդին՝ մաղթելով ստեղծագործական հրայրք ու երկար, արգասալից ճանապարհ:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 11.09.2025, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: